



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



85-185  
9-74

2697

Op.



2011



# ԱՌԱՓԻՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՐԴԱԿԱՆ ՅԱ

ԿԱՏԱԿՐԳՈՒԹԻՒՆ

ՔԱՐԼՕ ԿՈԼՏՈՎ

ՏՎԱԼԵՑԻ ՀՊ-ՀԱԿԱԿԱՐ

Թարգմանեալ Առաջական

Կ ՊԱՂՏԱՍԱՐԱՐԵ Գ. ՊԱԼԵԱԶՈՐԵԱՆ



ԶՄԱՐԴԱՐ

ՑՊԵԳԻՐՈՒԹԻՒՆ ՑԷՏԵԵՎԻ

1866

2003

СЕВЕРНЫЙ  
СИБИРЬ  
СОВЕТ

Վ. 94/8  
ԱՐԱՔԻՆՈՒԹԻՒՆ

# ՔԱՐԼՈ ԿՈԼՏՈՆԻ

85-



8 - 74

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՔԱՐԼՈ ԿՈԼՏՈՆԻ

ԽԱՀԱԿԱՑԻ ՀԹՀԱԿԱՆՈՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Թարգմանեալ յիտաշականէ

Ե ՊԱԴԱՍԱՐԵ Գ. ՊԱԼԴԱԶԱՐԵԱՆ



ԶՄԵՐԺԵԱ

ՑՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՑԵՑԵԵՆ

1866

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
11-1922

829

## ՅԵՌԵ ՔԱԲԵ

Չմեռուան երկրպյն դիշերները ժամանակի զուարձութեամբ անցընել ու գելով ու սիրելի ազգիս երիտասարդուհեաց առաքինութեան ու ողջախոչութեան օրինակ մը տալ բաղձալով, ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԲԱՄԵԼԱՅԻ անուանեալ այս փոքրիկ կատակերգութիւնը աշխարհաբառ և դիւրիմաց ոճով թարգմանելու ձեռնամնութեալոյ:

Կարելի է որ օգսակար դաս մը լինի գարուս երիտասարդուհիներուն, ու բոնք թէեւ Եւրոպական սովորութիւններուն և կամ ինչպէս կ'ըսուի Ալաֆրանքայի կը հետեւին, բայց կը ցաւիմ ըսելու որ եղբեմն ունաց մինակ այն մասերուն կը համաձայնին, որոնցմէ աւելի զգուշանալ պէտք էլի՞ն քան թէ հետեւել:

Եւրոպացիք թէեւ ունին ընտիր ընտիր սովորութիւններ, բայց այնպիսի սովորութիւններ ալ ունին, որոնք ՚ի կործանութեան կ'առաջնորդեն. այս նիւթիս վրայ երկարուեն խօսիլը զանց կ'ընեմ քաջ դիւնալով որ մեր Հայկազնեան օրիորդաց բնական եղած համեստութիւնն և աղնուութիւնը արդեն զգացած են անբարդականութեան վտանգները և անմեղութեան ու առաքինութեան դերագանցութիւնը:

Այս փոքրիկ աշխատութիւնս իմ՝ սիրասուն չորեսին դստերացս կը նուիրեմ: ՄԱՐԻ — ԱՆՆԱ, ՎԵՐԱՆԻՔԸ, ԳԱՍՊԱՐՈՒԴԻ — ԵՒՓԻՄԻԸ, և ԼԻՈՆԻՄԻԸ. և այս քանի մը տող հայրական խրատներս որքան որ անոնց օգտին ու զգուշութեանը համար կը դեմ, փափառելի էր ինձ որ արդի օրիորդներն եւս օգուտ քաղէին անկէ:





## ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Առենք մը Անգղիոյ մեջ աղքատ աղջիկ մց կար Բաշմէս անուն , որ թէպէս եւ զուրկ էր առեն կերպ արտաքին հարստութիւններէ , բայց անոնց փոխարէն՝ չնաշխարհիկ համեստութեամբ ու առաքինութեամբ զարդարուած էր . իր կրթութիւնը զնդուներ էր երեւելի տիկնոյ մը քով , որ դժբաղդաբար քիչ առենէն եւոքը մեռաւ :

Այս տիկնոյ տղան՝ Մայզորան Պօնֆիլ Բամելայի հազորագիւռ գեղեցկութիւնն ու համեստութիւնը տեսնելով չափազանց սիրահարեցաւ անոր , բայց պարկեցու աղջիկը չնդդիմացաւ անոր իմացընելով թէ որքան անպատճան է պայտագատի մի որ աղքատ աղախինի մը վրայ սէր ձգէ . եւ թէ մեծ անպատուութիւնն պիտի ցցար իւր ազգաստոհմին եթէ ամուսնացաւ ցցար անոր հետ . յաւեցոց նույն որ , եթէ ուրիշ ապօրինաւոր կերպին զինքը բունադրաւել ու զէր , չաւ եւս կը համարէր ինքզինքը իւր մեռքով ապանել , քան իւր պատիւութ ուոքի տակ ձգել :

Վերջապէս Պօնֆիլ յուսահանելով , միտքը դրաւ թէեւ տրումաչի սրտի . որ թող տայ Բամելան որ ծնողացը քովը երթայ , որոնք գեղը կը բնակէին . բայց մեկնելու պարատութիւններ տեսնելու առենք դիպուածով մը աղջկան հայրը կու գայ որ գան տանի :

Մայզորան հետ խօսելու առենք կը յայտնուի որ Սկով տիպայի երեւելի ազնուականներէն մէկն է եղեր ան , որ պարտամբութեան մը պատճառաւաւ պարտաորեր է գեղը կրթալ ու հոն երկրագործութեամբ գաղտնի ապրիլ տէրութեան բարկութենէն ազատ ցցացու համար . այս լուելով անպատմելի յուրախութեամբ ցուեցաւ սիրահար Մայզորան սիրտը , վասն զի Բամելային ազնուական ցեղէ ցւալը յայտնի ցցացով , անոր հետ պատկուեցաւ , որով իւր յուսահատութիւնը անհամեմատ ուրախութեան փոխուեցաւ քիչ առենուան մէջ :

## Ա Ն Պ Յ Ա Ք

ՄԱՅԼՈՐՏ ՊՕՆՖԻԼ · Հարուստ; Անդղեացի ·  
ՄԱՅԼԵՏԻ ՏԱՄԻՔԻ · Մ · Պօնֆիլի քոյրը ·  
ԱՄՊԵՏ ԷՐԿՈԼՏ Ազգական Մ · Տառըէին ·  
ՄԱՅԼՈՐՏ ԱՐԹՈՒՐ · Բարեկամ Պօնֆիլի ·  
ՄԱՅԼՈՐՏ ՔՈԽՄՊԵՔ · Նոյնպէս բարեկամ վերնոյն ·  
ԲԱՄԻԼԱ · Սկնեկապետուհի Մ · Պօնֆիլի հանդուցեալ մօրը ·  
ԱՆՏԻԵՎ · Բամելոյին ծերունի հայրը ·  
ՏԻԿԻՆ ԵՎԾԻԿ · Ա երակացուհի Մ · Պօնֆիլին տանը ·  
ԼՕՆԿՄԱՆ · Ա երակացու վերցիշեալ տանը ·  
ՈՒՒԼԵՄ · Քարտուղար Մ · Պօնֆիլի ·  
ԻՍԱՀԵԼ · Սպասառոր Մ · Պօնֆիլի ·

Տեսարանք կը ներկայացնե Լոնտրայի մէջ Մ · Պօնֆիլի  
տանք մէկ արահիք , որ քանի մք դոներ ունի :

# ԲԱՄԵԼԱ



## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### ՏԵՍԱՐԱՆ ԵԹԱԶԻՆ

ԲԱՄԵԼԱ Յառած շապիկ մը կը կարէ , և Տիկին ԵՎՐԻ բանակ կը մանէ :

ԵՎՐԻ . Բամելա , աղջիկս , ի՞նչ ունիս ու կու լաս :  
ԲԱՄԵԼԱ . Քանի անգամ որ կը յիշեմ իմ խեղճ տիրու-  
չիս՝ չեմ կրնար լացս բռնել :

ԵՎՐԻ . Երաւունք ունիս . բայց պէտք չէ որ այնքան շատ  
լաս , ի՞նչու որ արդէն երեք ամիս է անոր մնոնիլ :

ԲԱՄԵԼԱ . Բնաւ մոռնալու չեմ իմ Տիրուհիս , վասն զի  
ես աղքատ զիւղացիի աղջիկ մ'եմ , ու հայրս իւր օրական  
ապրուստը Ճարելու համար՝ երկիրը մշակելու պարտաւորած  
է . իմ տիրուհիս պատճառ եղաւ , որ ես այս հանգիստ վե-  
ճակիս մէջ կը զանուիմ : Արտի կամ պարտէզի մէջ զործելու  
տեղ՝ պատիւ ունեցայ անոր սենեկապետուհին ըլլալու . ա-  
մեն կերպ բարեկրթութիւններով վարժեց զիս , իւր աղջկան  
պէս կը սիրէր ու կ'ուղէր որ միշտ քովը ըլլամ . այս պատ-  
ճառներուն համար չեմ կրնար մոռնալ իմ բարեպաշտուհի  
տիրուհիս , ասդա թէ ոչ՝ ապերախտ աղջիկ մը ըլլալու էի  
ու անարձան աս բարեբաղդ վիճակին , որ վերին նախա-  
խնամութիւնը պարզեց ինձի անոր ձեռքովը :

ԵՎՐԻ . Աս ըսածներդ Ճշմարիտ են , մեր տիրուհին շատ  
կը սիրէր զքեղ , բայց գուն ևս յիրաւի սիրոյ արժանի աղ-  
ջիկ մ'ես քու խոչեմութեամբդ ու համեստութեամբդ , վեր-  
ջապէս մէկ խօսքով խիստ շնորհալի ու չքնաղ օրիորդ մ'ես :

ԲԱՄԵԼԱ . Տիկին Եվրէ , աս խօսքերովդ կ'ամշցունես զիս :

ԵՎՐԻ. Յիրաւի, բամելա, անկեղծութեամբ կ'ըսեմքեզի  
աս խօսքերս, ինչու որ քսան տարիի չափ է որ պատիւ ու  
նիմ այս տունը ծառայելու, ու անկեղծութեամբ կը խոսսու  
վանիմ թէ որքան սենեկապետուհիներ որ պատահեցան այս  
տունը, քեզմէ աւելի խելացին չեսսայ:

ԲԱՄՔԵԼԱ. Աս ամեն զովութիւնները քու բարերարութենէդ  
առաջ կու դան, որով ներողամիտ կ'ուզես ըլլալ իմ պա-  
կասութեանցս:

ԵՎՐԻ. Գուն ամեն կերպ ուրիշ շնորհքներէն 'ի զատ, ա-  
նանկ գիւրիմաց ընդունակութիւն մը ունիս, որ իսկոյն ամեն  
բան յաջողութեամբ կը սորվիս:

ԲԱՄՔԵԼԱ. Ինչ որ գիտեմ, բոլորն ալ իմ տիրուհիիս իւր-  
նամբով սորվեր եմ:

ԵՎՐԻ. Ասոնցմէ զատ, բամելա, վերջապէս խիստ աղւոր  
ու չքնաղադէմ աղջիկ մ'ես, որուն համար ուրախակից եմ  
քեզի:

ԲԱՄՔԵԼԱ. Ասանկ խօսքերով կը պատկառեցընես զիս:

ԵՎՐԻ. Ճշմարիտ աղջիկիս պէս կը սիրեմ զքեզ:

ԲԱՄՔԵԼԱ. Եւ ես իմ մօրս պէս կը պատուեմ զքեզ:

ԵՎՐԻ. Շատ զոհ եմ որ մեր տիրուհիին մեռնելոն ետև  
դուն մեր հետը մնացիր:

ԲԱՄՔԵԼԱ. Խեղճ տիրուհիս, ի՞նչպէս մայրազութ սիրով  
յանձնաբարութիւններ ըրաւ ինձի համար իւր որդւոյն, կ'ե-  
րեար թէ ինչուան մեռնելու վերջին վայրկեանը ուրիշ բան  
չէր խօսեր իւր որդւոյն բայց միայն ինձի համար, այս պատ-  
ճառաւ երբ կը յիշեմ անոր մայրական գութը, չեմ կընար  
արտասուբս զսպել:

ԵՎՐԻ. Ինչպէս որ տիրուհիդ կը սիրեր զքեզ, նոյն սէրը  
ունի քու վրադ Մայլորան ալ:

ԲԱՄՔԵԼԱ. Աստուած երկար կեանք տայ անոր, ու սրտին  
փափաքը կատարէ:

ԵՎՐԻ. Երբ Մայլորատ ամաւսնանայ, գուն անոր տիկնոջը  
սենեկապետուհին պիալ ըլլաս:

ԲԱՄԵԼԱ. Ա՞չ :

ԵՎՐԵ. Ինչու ախ ըրիր, ի՞նչ է պատճառը :

ԲԱՄԵԼԱ. Կը բարեմաղթեմ վերին Նախախնամութեան որ անոր բաղձանքը կատարե՛ :

ԵՎՐԵ. Այդ բարեմաղթութիւնները սրտա՞ց կ'ընես աշնոր համար :

ԲԱՄԵԼԱ. Ի՞նչպէս չընեմ իմ բարերարիս համար, որ միշտ իմ լաւութեանս իննամք կը տանի :

ԵՎՐԵ. Ցիրաւի, անունդ տուած ատենը կարծես թէ շոր թունքները կը խընդան :

ԲԱՄԵԼԱ. Շիտակը խիստ բարեսիրտ է :

ԵՎՐԵ. Այսու ամենայնիւ ծանրաբարդութիւն մը ունի, ու շտա քիչ կը խօսի, ինչպէս որ հասարակ է մեր Անդզիացի աղջին :

ԲԱՄԵԼԱ. Աղնուական շնորչք մ'է մարդուս քիչ բայց բարուք խօսիլը :

ԵՎՐԵ. Բամէլա, դուն քիչ մը հոս կեցիր, ու ես հիմա շուտով կը դառնամ : (առժ էլելէ) :

ԲԱՄԵԼԱ. Տիկին, կ'աղացէմ երկար ատեն մինակ մի՛ թուղուր դիս :

ԵՎՐԵ. Կը տեսնես որ կարծս լեցուեցաւ, կ'երթամ որ ու քիշ գատարկ մը առնեմ, ու իսկոյն կու դամ :

ԲԱՄԵԼԱ. Զէի ուզեր որ Մայլորտը դիս մինակ դանէ :

ԵՎՐԵ. Ան պատուաւոր ասպետ մ'է, ու չլայելեր որ դուն անորմէ վախնաս :

ԲԱՄԵԼԱ. Մայլորտն ալ մարդ է, ինչպէս ուրիշ մարդիկ :

ԵՎՐԵ. Հոդ չէ, հոդ չէ, միամիտ եղիր, ու միաքդ զէշի մի տանիր, ես իսկոյն կը դառնամ :

ԲԱՄԵԼԱ. Թէոր Մայլորտը դալու ըլլայ, ըւր տուր ինծի :

ԵՎՐԵ. Այս, անչող եղիր : (Ձեկուակ) Կասկած մտաւ սըրտիս մէջ, Բամէլան անդադար Մայլորտին վրայօք կը խօսի, աս բանիս ետեւն լյնամ, նայինք վերջը ուր պիտի կայտնայ :

(էլելայ) :

ԲԱՄԵԼԱ. Հիմա որ տիկին Եվրեն հոս չէ, կրնամ համար ձակ լաւ, բայց աս թափած արտասուլքս խեղճ տիրուհին համար են արդեօք, ես այս կ'ուզեմ ըսել, բայց վշտալի սիրտ ինձի ո՛չ կ'ըսէ: Ետ կը աեսնեմ որ պարոնը մեծ հաճութիւն ունի ինձի հետ խօսելու, իմ անունա խնդալից զրթունքներով կ'արտասանէ, անոր աչքերը երբ ինձի կը հանդիպին չի քաշեր շուտով իմ վրայէս. մէկ քանի խօսքեր ըսաւ, ուրինք ամենքն ալ ինձի համար ունեցած մարդասիրութիւնն ու խնամքը կը յայտնեն: Ո՛չ, ինչ կրնամ յուսալ աս խօսքերէն, կը մտածեմ թէ աս ամեն մարդասիրութիւնը իր հանգուցեալ մօրը յանձնարարութեանը համար կընէ, որ մեռնելու ատենը պատուիրեց անոր որ զիս աղեկ նայի, այո՛, մի այն աս պատճառիս համար կ'ընէ. իսկ եթէ ուրիշ պատճառ մը կը շարժէ զինքը, պէտք է որ շուտով ու անպատճառ հետանամ աս տունէն, ու երթամ իմ պարկեշտ ծնողացս ծոցը պահպանուիմ՝ համեստութեան զոհ ընելով իմ բարեբաղդութիւնս. բայց հիմա որ մինակ կը դանուիմ, պէտք է վերջացընեմ իմ նամակս, որ միտքս դրի հօրս զրկելու, ծանուցանելով անոր հիմակուան իմ հանգիստ վիճակս, որպէս զի ուրախանայ իմ մօրս հետ, թէ միշտ բարեբաղդութեան մէջ եմ, ու կը մնամ այս տանը մէջ տիրուհիս մեռնելէն ետքը, ու իմսիրելի տէրս մեծ սիրով կը յարդէ զիս, ինչպէս կընէր իր մայրը. ասոնք ամենը առ այժմ զրուած են, ուրիշ բան չեմ ուզեր աւելցընելու, միայն պէտք է ծանուցանեմ որ իմ տիրուհիս ձգած կնէներէն քանի մը հատ իրեն կը զրկեմ իւր պիտոյիցը զործածելու համար. (կը հանէ կնէները և նուղին չը կտանէ որ գրէ). ուրքան կը ցանկայի տեսնելու իմ սիրելի ծնողքս, եթէ հնար է թող զայ հայրս զիս տեսնէ. ամիս մ'է որ կը խոստանայ դալու, ու դեռ չեմ տեսներ զինքը, գրելու եմ առանց երկար խօսք խօսելու որ զայ: (կը գրէ և գրած ժամանուիլ Ապալորու կու գոյ):

## ՊՕՆՓԻԼ ԵՒ ԲԱՄԷԼԸ

- ՊՕՆՓԻԼ . (Առանցին հետառելն) . ԱՀԱ իմ աչացը լոյսը Բառ  
մէլան որ կը զրէ :
- ԲԱՄԻԼԸ . (Գրելլ) . Եւ զաս շուտով :
- ՊՕՆՓԻԼ . Բամէլա :
- ԲԱՄԻԼԸ . Հբամայեցէք : (ապէ է'լլէլ) :
- ՊՕՆՓԻԼ . Որո՞ւ կը զրես :
- ԲԱՄԻԼԸ . Հօրս կը զրեմ :
- ՊՕՆՓԻԼ . Տուր ինծի տեսնեմ ինչ կը զրես :
- ԲԱՄԻԼԸ . Ներեցէք . . . աղէկ զրել չեմ զիտեր :
- ՊՕՆՓԻԼ . Մի՛ պաշեր , նամակը տեսնել կուզեմ :
- ԲԱՄԻԼԸ . Տէր էք . (կու ուայ գիրը) :
- ՊՕՆՓԻԼ . Ցած յաջնով իւ կորդոյ :
- ԲԱՄԻԼԸ . (Բնժնիբէն) . Ա.այ ինծի , հիմա տեսնելու է իրեն  
համար դրածս :
- ՊՕՆՓԻԼ . Կարբացան ժամանելը Բառելային կը նայի ու իւ ծէժաղի :
- ԲԱՄԻԼԸ . (Բնժնիբէն) . Կը ծիծաղի կամ ինծի կամ նամա  
կիս համար :
- ՊՕՆՓԻԼ . Կորին Բամէլային իւ նայի ու իւ ծէժաղի :
- ԲԱՄԻԼԸ . (Բնժնիբէն) . Ա.երջաղես ինչ որ Շշմարիտ էր այն  
զրած եմ :
- ՊՕՆՓԻԼ . (Կամակը անոր իու ուայ) . Ա՛ռ :
- ԲԱՄԻԼԸ . Ներեցէք , տէր իմ :
- ՊՕՆՓԻԼ . Բամէլա , շատ աղսոր կը զրես :
- ԲԱՄԻԼԸ . Կըցածիս չափ :
- ՊՕՆՓԻԼ . Ես քու սիրելի տէրդ եմ , այնպէս չէ՞ :
- ԲԱՄԻԼԸ . Ներումն կը խնդրեմ թէ որ արժանաւոր ակնա  
ծութեամբ դրած չեմ ձեր աղնուութեանը համար :
- ՊՕՆՓԻԼ . Քու սիրելի տէրդ ներողամիտ կը լլայ քեզ ու կը  
զավէ զրել :

ԲԱՄԵԼԱ. Գուղ նոյն ինքն բարեբարութիւն էք :

ՊՕՆՓԻԼ. Գուն ալ նոյն ինքն գեղեցկութիւն ես :

ԲԱՄԵԼԱ. Տէր իմ, ձեր հրամանաւը : (Երեսակ կ'ուղղէ) :

ՊՕՆՓԻԼ. Ա'զ կ'երթաս :

ԲԱՄԵԼԱ. Տիկին Եվրեան ինձ կ'ըսպասէ :

ՊՕՆՓԻԼ. Ես քու տէրդ իմ, ու կը հրամայեմ ոք կենաս :

ԲԱՄԵԼԱ. Աը հնազանդիմ:

ՊՕՆՓԻԼ. (Սարդին ճը կու ոռայ). Ա'ո այս մատնին :

ԲԱՄԵԼԱ. Աս ինչ է ինձ տուածնիդ :

ՊՕՆՓԻԼ. Զես Ճանչնար, մօրս մատնին է :

ԲԱՄԵԼԱ. Իրան կ'ըսէք. 'Ա՛, այս, Ճանչցայ, ինչ կ'ուղէք ոք ընեմ զայս :

ՊՕՆՓԻԼ. Մատդ դիր 'ի յիշատակ հանդուցեալ մօրս :

ԲԱՄԵԼԱ. Ա՛՛, տէր իմ, մատներս արժանի չեն այսուիսէ ադամանդեայ մատնի մը կրելու :

ՊՕՆՓԻԼ. Մայրս քեզի համար թողուց ոք դրուիս, ու ինձ ալ սպառուիրեց ոք քեզի տամի :

ԲԱՄԵԼԱ. Խիստ կ'երկրայիմ, տէր իմ, կ'երկրայիմ ըստ նուդ վրայ :

ՊՕՆՓԻԼ. Ես չեմ երկբայիր. ես կ'ըսեմ ոք այս մատնին առնես ու դէմ չկենաս :

ԲԱՄԵԼԱ. Աւ ետք . . . :

ՊՕՆՓԻԼ. (Բարձրութանք). Ա'ո կ'ըսեմ քեզի :

ԲԱՄԵԼԱ. Աը հնազանդիմ. (Կառաւածական ճանապահն առ Յերակ իւ ականեկ) :

ՊՕՆՓԻԼ. Մատդ դիր :

ԲԱՄԵԼԱ. Բնաւ շվայելիր ինձի :

ՊՕՆՓԻԼ. Տուր ուրեմն ինձի :

ԲԱՄԵԼԱ. Հրամայեցէք. (Սարդին Արյուղութիւն իսա ոռայ) :

ՊՕՆՓԻԼ. Զեսքդ ալ տուր :

ԲԱՄԵԼԱ. Աս ըլլալու քան չէ :

ՊՕՆՓԻԼ. Զեսքդ կ'ըսեմ, Զեսքդ. (Առաջ կ'էլլէ) :

ԲԱՄԵԼԱ. Ա'ոյ ինձի :

ՊՕՆԳԻ. • Ար բարկացըներ դիս :

ԲԱՄԵԼԱ. • Աշ գողամ. (Էլ նայէ շար ուն ու Եպէլը Յեւածը է ու որոյ անոր) :

ՊՕՆԳԻ. • (Մարդին մարդը է ու դնե, ու յեւածը ուղղելով էլք է) .

ԱՀԱ կը տեսնես ինչպէս աղօւոր է, գուն չիս ուզեր որպէս թէ չի վայելեր քեզի :

ԲԱՄԵԼԱ. • Աերնայ երեսը իսկուց այս էլք է ուցելով :

ՊՕՆԳԻ. • Ամօթխածութիւնը շատ դովելի է, բայց երբ եմ բոլորին անօդուտ . Ե՛լրէ : (Էլ իանչէ)

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

#### ՏԻԿԻՆ ԵՎ ԾԻ ԵՒ ՊՕՆԳԻ.

ԵՎՐԻ. • Ահաւասիկ եմ տէր իմ, ի՞նչ կը հրամայէք :

ՊՕՆԳԻ. • Բամէլան տեսած :

ԵՎՐԻ. • Ի՞նչ ըրիք որ կու լայ :

ՊՕՆԳԻ. • Մեծ չարիք մը ըրի, մատնի մը բաշխեցի իրեն :

ԵՎՐԻ. • Ուրեմն իր ուրախութենէն է որ կու լայ :

ՊՕՆԳԻ. • Չեմ հաւատար, կարելի է թէ ամշնալէն կու լայ :

ԵՎՐԻ. • Այս օրուան օրս աղջիկները ասանի բանի համար չեն լար :

ՊՕՆԳԻ. • Եվրէ, յայտնի ըսեմքեզի, բամէլան կը սիրեմ :

ԵՎՐԻ. • Փոքր ՚ի շատէ իմացայ քանի մը օր կայ :

ՊՕՆԳԻ. • Ի՞նչ կարծես . Բամէլան զիտէ արդեօք :

ԵՎՐԻ. • Չեմ զիտէր, ինչ ըսեմ. բայց կասկած ունիմ :

ՊՕՆԳԻ. • Ի՞նչպէս կը խօսի ինձի համար :

ԵՎՐԻ. • Այնպիսի ակնածութեամբ մը որ իր սէրը կը յայտնէ :

ՊՕՆԳԻ. • Աիրելի բամէլան :

ԵՎՐԻ. • Այնքան պարկեշտ է բամէլան, ու իր պատոյն վրաց այնքան հաստատ, որ ալ տւելի չի կրնար ըլլալ :

ՊՕՆԳԻ. • Բամէլան :

ԵՎՐԻ. • Այս :

ՊՕՆԳԻՆ. ԿԵՐՊՈՎ մը իմացուր անոր որ կը սիրեմ զի՞նքը ։  
ԵՎՐԵ. Տան վերակացուհին մը կարծեմ թէ չվայելեր ա-  
տանկ բանի համար միջնորդ ըլլալ ։

ՊՕՆԳԻՆ. Առանց բամելային չեմ կրնար ժամ մը ապրելու ։  
ԵՎՐԵ. Ի՞նչպէս, պատկռելու էք հետը ։

ՊՕՆԳԻՆ. ԱՇ ։

ԵՎՐԵ. Աւքեմ ի՞նչ կ'ուզէք անորմէ ։

ՊՕՆԳԻՆ. Այսինքն ինքն ալ զիս սիրէ, ինչպէս որ ես  
զինքը կը սիրեմ ։

ԵՎՐԵ. Ի՞նչպէս կը սիրէք դուք զի՞նքը ։

ՊՕՆԳԻՆ. Հերիք է այսքան, շուար գտիր բամելան և խօսէ  
անոր ի՞նչ որ ես քեզի խօսեցայ թէ՝ կը սիրեմ զի՞նքը  
և թէ կուզեմ որ ինքն ալ զիս սիրէ, և մինչեւ մէկ ժամ  
քէղմէ պատասխան կ'ըսպասեմ հաս ։ (Կը Ձէնի) ։

ԵՎՐԵ. Մինչեւ մէկ ժամ, այս, կը կարծեն թէ այսպիսի  
բաները տսանկ շուար կը լմնան, բայց ես ի՞նչ ընելու եմ  
չիմա այս բանիս վրայօք, բան մ' ըսեմ բամելային, թէ՝  
ո՛չ, թէ Պարոնին ուղածին պէս խօսիմ և անոր կամքը կա-  
տարեմ. շատ անպատիւ բան մ' ըրած պիտի ըլլամ. Հոս  
պէտք է աղէկ մասածեմ, ու կարելի է ճամբայ մը դժնամ  
ու պահպանեմ որքան որ կարելի է խեղձ աղջկան պատիւը,  
առանց բորբոքելու Մայլորտին կիրքը ։ (Կը Ձէնի) ։

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԲԱՄԵԼԱ առանցքն ։

ԱՇ, սիրուն մատնի, ո՞րքան աւելի սիրելի պիտի ըլլայիր,  
թէ որ Մայլորտը տուած չըլլար . . . : Աակայն եթէ Մայլորտը  
տուած չըլլար, այսքան սիրելի երենալու չեր ինձ. վասն  
զի բուն անոր ձեռքէն ինձի դալրւն համար՝ ագամանդին ար-  
ժողութենէն աւելի թանկազին է՝ բայց ինչ օգուտ, այս  
մատնին ինձ տուողը ասպետ մ'է, ու ես աղքատ աղտօին

ՏԵՐԵՎՈՒՄ : Աւըալիս եմ՝ որ Տէրս այս մատնին ինձ առաջ բայց չէի ուզեր որ ան իմ Տէրս ըլլար, երանի թէ ան ալ ծառ ույ մը ըլլար ինծի պէս, կամ՝ թէ ես ալտիկին մ' ըլլայի, ինչպէս որ ինքը ասպետ մ'է : Ո՞ր վիճակին կը վայելէ ինձ որ փափաքիմ, անոր նուաստութեանը ցանկամ, անիբաւութիւն ըրած պիտի ըլլամ' անոր արժանաւորութեանը, ու թէոր ինձ մեծութիւն ցանկամ՝ ամբարտաւանութիւն ըրած կ'ըլլամ' . . . : Ո՛չ, աստիճանիս մեծութեանը չեմ ցանկար, ո՛չ, զիտեմ ինչ է ոյս ցանկութեանս պատճառը . . . : Սակայն ես ինչ խենդք բաներ կը մտածեմ, որոնք երազական երեակայութիւններէն ալ աւելի տարօրինակ են : Անանկ խորհրդածութիւններ կ'ընեմ որ եթէ ուրիշները խմանալու ըլլան՝ անշուշտ շատ ամաչելու եմ . . . : Մարդու ձայն կը լոեմ. տիկին Եվրէն ըլլալու է :

### ՏԵՍԱԲԱՆ Զ.

#### ՊՕՆՖԻԼ ԵՒ ԲԱՄԵԼԱ.

ԲԱՄԵԼԱ. Ո՛չ, վայ ինձ, աչա Տէրս է որ կու գայ :  
ՊՕՆՖԻԼ. (Թուառէ) Բոլորովին անշանզ իստ եմ : (Յարձը յայնով) Բամէլա, տիկին Եվրէն տեսա՞ր :

ԲԱՄԵԼԱ. Տէր իմ, ձեր քովէն մեկնելէս ետե չտեսայ :  
ՊՕՆՖԻԼ. Քեզի հարկաւոր խօսք մը ունէր խօսելու :  
ԲԱՄԵԼԱ. Ծառ ժամանակ չէ ձեր աղնուութեան քովէն բաժնուիլու :

ՊՕՆՖԻԼ. Բամէլա, հարկաւոր բան մը մոռցայ քեզի խօսելու :

ԲԱՄԵԼԱ. Տէր իմ ձեր հարմանաւը երթամ տիկին Եվրէն կանչեմ :

ՊՕՆՖԻԼ. Կեցիր, պէտք չունիմ անոր :

ԲԱՄԵԼԱ. Ի՞նչ պիտի ըսեն մեզի համար, աէր իմ, երբ երկուքնիս միատեղ առանձին աեսնեն :

ՊՕՆԳԻԼ. Տան տէրը չկ' կընար ուրեմն իր աղախնոյն չետ  
առանձին խօսիլ:

ԲԱՄԵԼԱ. Զեր տանը մէջ ես ապահով չեմ:

ՊՕՆԳԻԼ. Ինչո՞ւ համար:

ԲԱՄԵԼԱ. Վասն զի կին չունիք որ անոր ծառայեմ:

ՊՕՆԳԻԼ. Մաիկ ըրե ինձ, բամէլա, տրկին Տառւրե քոյլս  
կ'ուզէ որ իւր քովը ծառայելու երթաս, կերթաս սրտովդ:

ԲԱՄԵԼԱ. Ինչպէս որ կը հրամայէք, այնպէս կ'ընեմ:

ՊՕՆԳԻԼ. Կ'ուզէմ որ կամքդ դիանամ:

ԲԱՄԵԼԱ. Կրնայ տիկին Տառւրեն իմ անարժանութեա-  
նէս զոհ ըլլալ. տիկինը քիչ մը ձանձրացուցիչ բնու-  
թիւն ունի, ու ես սովորած եմ ներողամիտ տիկնոջ մը ծա-  
ռայելու, ինչպէս էր ձեր հանգուցեալ մայրը:

ՊՕՆԳԻԼ. Հասկցածս սրառվդ չես ուզեր երթալ:

ԲԱՄԵԼԱ. (Նկուսէ). Հարկաւ պէտք է որ ընդունիմ, այո՛,  
աէր իմ, սրտովդ կ'երթամ:

ՊՕՆԳԻԼ. Բայց ես չեմ ուզեր որ գուն իմ տունէս մեկնիս:

ԲԱՄԵԼԱ. Ի՞նչ պատճառաւ:

ՊՕՆԳԻԼ. Վասն զի մայրս զքեզ իմ հովանաւորութեանս  
յանձնեց:

ԲԱՄԵԼԱ. Անշուշտ, երբ ես ձեր քրոջը քովը երթամ, ձեր  
չովանաւորութիւնը չեմ կորսնցըներ:

ՊՕՆԳԻԼ. Իմ քոյրս խելազար կին մ'է:

ԲԱՄԵԼԱ. Ինչո՞ւ ուրեմն առաջարկեցիք ինձ որ անոր քովը  
երթամ:

ՊՕՆԳԻԼ. Ինչ պատասխան տալդ իմանալու համար:

ԲԱՄԵԼԱ. Պէտք չէիք կասկածիլ իմ այո՛ ըսելուս:

ՊՕՆԳԻԼ. Ես կը յաւսայի որ ո՛չ ըսելու ես:

ԲԱՄԵԼԱ. Ի՞նչ պատճառաւ, տէր իմ:

ՊՕՆԳԻԼ. Վասն զի զիաւս որ զքեզ կը սիրեմ, (սիրուն  
չողիս):

ԲԱՄԵԼԱ. Եթէ ըսածնիդ ճշմարիտ է, տէր իմ, շուտով  
պիտի երթամ ձեր քրոջը քովը ծառայելու :

ՊՕՆՓԻԼ. Շատ անգութ սիրտ պիտի ունենայիր, եթէ զիս  
թողուիր ու երթայիր :

ԲԱՄԵԼԱ. Անանկ մէկ կերպով կը խօսիք, որ կը դողմու  
ու կը սարսափիմ :

ՊՕՆՓԻԼ. Բամելա, տուր ինձի քու պատուական ձեռքդ  
քիչ մը :

ԲԱՄԵԼԱ. Անշուշտ պիտի չտամ :

ՊՕՆՓԻԼ. Կը յանդդնիս ինձի դէմ կենալու :

ԲԱՄԵԼԱ. Այո՛, կը յանդդնիմ իմ պատիւս պահպանելու  
չամար :

ՊՕՆՓԻԼ. Ես քու տերդ եմ :

ԲԱՄԵԼԱ. Այո՛, դուք իմ տէրս էք, բայց ոչ իմ պատոյս :

ՊՕՆՓԻԼ. Անդդայ սիրտ մը ունիս դուն :

ԲԱՄԵԼԱ. Համեստ աղջիկ մ' եմ ես :

ՊՕՆՓԻԼ. Շատ և համարձակ կը խօսիս, բաւական է ձեռքդ  
ինձի տուր :

ԲԱՄԵԼԱ. (Կը հանէլ). Տիկին Եվլուէ :

ՊՕՆՓԻԼ. Լուս կեցիր, Բամելա :

ԲԱՄԵԼԱ. Այո՛, լուս կը կենամ, եթէ դուք ալ ասկից  
երթաք :

ՊՕՆՓԻԼ. Անգամ. (Դէպ ՚ի սէնեակին դուռը է Երբայշ) :

ԲԱՄԵԼԱ. (Երկինք, օդնէ ինձ) :

ՊՕՆՓԻԼ. Ո՞ւ եմ ես, թշուառական, սադայել մ' եմ որ  
քեզի կը վախցընեմ :

ԲԱՄԵԼԱ. Սադայելն չաբաղոյն էք, եթէ զիս բոնա-  
բարէք :

ՊՕՆՓԻԼ. Ե՛կ, սիրուն հոգիս Բամելա, տուր ձեռքդ ինձի  
և մի վախնար :

ԲԱՄԵԼԱ. Ո՛չ, անշուշտ ո՛չ :

ՊՕՆՓԻԼ. Աւզես չուզես ձեռքդ պիտի բանեմ՝

ԲԱՄԵԼԱ. Տան մէջ բոլը եղողները ոտք պիտի հանեմ  
ձայներովս :

ՊՕՆԳԻ. Առ, Բամելա, առ, աշա յիսուն սոկի. Քեզի  
ըլլան ասոնք, ինչ որ կուղես ըրե :

ԲԱՄԵԼԱ. Իմ պատիւս աշխարհիս բոլոր սոկին ալ աւելի  
կարծէ :

ՊՕՆԳԻ. Առ սա սոկիները, թշուառական, առ կը ըսկմ  
քեզի, երդում կ'ընեմ որ հայհոյել տալու չափ սիրառ կը  
նեղացընես :

ԲԱՄԵԼԱ. Կառնեմ սոկիները, բայց այն պայմանաւ որ  
թողուս ինծի քանի մը խօսք խօսելու առանց ընդմիջելու :

ՊՕՆԳԻ. Այս, խօսէ :

ԲԱՄԵԼԱ. Երդում ըրեք :

ՊՕՆԳԻ. Իբր ասպետ կը խոստանամ որ խօսքդ չեմ կտրեր :

ԲԱՄԵԼԱ. Կը հաւատամ ձեզ, կ'առնում սոկիները և մը-  
տիկ ըրեք ինչ բանի համար ստիպուած եմ խօսելու :

Տէր իմ, ես աղքատ ծառայ մ' եմ. և գուք իմ տէրս եք  
և մեծ ասպետ մը, ու ես աղքատ ծնած եմ: Բայց երկու բան  
հաւատար ունինք մենք. բանականութիւն և պատիւ. ձեր  
աղնուութիւնը չի կրնար ինծի կերպով մը ըսել թէ իմ պատ-  
ւոյս վրայ տիրապետութիւն կամ իշխանութիւն մը կրնաք ու-  
նենալ. վասն դի բանականութիւնը ինձ կը սորվեցընէ թէ  
մարդուս պատիւը այնպէս մէկ դանձ մ' է, որ ամենեին մէկէ  
մը կախում չունի. աղնուուականութեան արիւն ունենալը պա-  
տահական բան մ' է, իսկ աղնուուական ու բարի դործքերը  
մարդուս մեծանձնութիւնը, ինչ ըլլալը և ինչ պատոյ տէր  
ըլլալը կը յայտնեն. կ'ուղէք, տէր իմ, որ հասարակութիւնը  
ըսէ ձեր աղնուութեանը համար թէ կը խոնարհիք աղախնոյ  
մը աստիճանին. կրնաք աս վարմունքով ձեր աղնուութեան  
պատիւը պաշտպանել. կ'ուղէք անկիրթ ու չար մարդոց լե-  
զուովը խօսելու թէ կնոջ մը պատիւը ըռնաբարելով մարդ-  
անպատիւ ըլլար: Ամեն չար դործերը անպատուութիւն կը

քնչը են ասպետի մը, ու առիշտ չար ու անիբար դ ործ մը չկրնար ըլլալ, երբ օրիորդի մը պատիւը կը բռնարարէ . անոր պատւոյն փոխարէն ի՞նչ կրնաք տալ, դրամի, ի՞նչ սարսափելի վարձատրութիւն անդին դանձու մը համար, ի՞նչ չար մը տածութիւններ ձեր ազնուութեանը համար, և ի՞նչ անարաժան հետեանքներ ինծի համար, առէք ձեր ոսկինները . (+ըստ առիլ Բերենիլը իը դնէ), անարձան ստակ, վատ ստակ, որ պատշաճու պիտի ըլլաս իմ պատիւս դաւաճաննելու: Տէր իմ, խօսակցութիւննիս երկար եղաւ. իմ խոստմունքս մէկ քանի խօսք ըսելու համար էր, բայց դիմագոր իրաւունքս յայտնելու ու պատիւս պաշտպանելու համար որքան որ խօսիմ՝ քիչէ, որուն համար, ովք տէր, պատրաստ եմ առջենիդ մեռնիլ, քան թէ՝ ամենաթեթև կերպով անպատուութեան յանձնառու ըլլալ: Բայց, ովք Աստուած, կ'երեկի թէ իմ խօսքերս ազդուութիւն ըրին ձեր պատուական սրտին մէջ, կարք ըսեմ, դուք բարեծնուուգ և աղնուուական ասպետ մ' էք, բայց դըքքաղդաբար ձեր կրից կուրութենէն կը խաբուիք: Անշուշանտքը պիտի իմանաք որ խաբուած էք ու ձեղմէ աւելի լաւ մաածած եմ ես և պիտի ամօթսով մնաք ինծի համար այսպէս չար խորհելուուգ համար և ուրախանալու էք որ ես ձեր ազնուութեանը հետ այսպէս համարձակ խօսեցայ: Տէր իմ, շընորհակալ եմ, որ այսքան խստութեամբ ձեր խօսքը պահեցիք, ու կը յուսամ որ այս իմ ձեզի տուած իրաւանց համոզուիք ու խորհուրդնիդ փոխէք, որուն համար բոլորով սրտիւ կաղաչեմ զԱստուած: Այս բոլոր մտածմունքներս ու խորհրդածութիւններս ձեր հանդուցեալ բարեպաշտ մօրը ինծի տուած բարի խրատներուն ու բարեկրթութեանց քաղցր պտուղներն են, որոնցմով միշտ կը կառավարուիմ ու կապարիմ, երանի թէ անոր բարի օրհնուութիւնը ներգործութիւն ընէ ձեր սրտին զղջմանը, ձեր առաքինութեան ազատութեանը, ու իմ անդին պատուոյ ջատագովաւթեանը: (ԱԵՆ Համեմատ բառուած ելլել կ'առաջէ):

ՊՕՆԳԻ. Անշարժ իւ մեայ առանց իւսուտ մը իւսուլուս։  
ԲԱՄԵԼԱ. Ե՛րկինք, օդնէ ինձ. թէ որ կարենամ աղատիլ  
զիս, խիստ բարեբաղդ եմ։ (Դաստիարակ իւ բանայ ու իւ գախէն)։  
ՊՕՆԳԻ. Տակարէն անշարժ ու լաւա իւ մեայ, առա էսկէ վեր  
'է վայր ճեմլուս, ու երտը իւ նստէ իւ մորմուց։

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՏԻԿԻՆ ԵՎԸՆԻ ԵՒ ՊՕՆԳԻՆ

ԵՎԸՆԻ. ՏԵՇ իմ։

ՊՕՆԳԻ. (Բարդապալումը). Գհա՛ ասկից։

ԵՎԸՆԻ. Հոս է, տէՇ րուն։

ՊՕՆԳԻ. (Դարձեալ բարեկամումը). Փախիր աչքիս առջնէն։

ԵՎԸՆԻ. Կ'երթամ. (Ժկումնէ), Լուսնին վերջի օրերն են։

ՊՕՆԳԻ. Ո՛չ։

ԵՎԸՆԻ. ՏԵՇ իմ։

ՊՕՆԳԻ. Հոս եկու։

ԵՎԸՆԻ. Աշաւասիկ հոս եմ, ի՞նչ կը հրամայեմ։

ՊՕՆԳԻ. Ո՞ւր զնաց Բամելան։

ԵՎԸՆԻ. Կարծեմ թէ մինչեւ հիմա հոս էր։

ՊՕՆԳԻ. Այս, հոս էր, բայց ի՞նչ օդուտ։

ԵՎԸՆԻ. Ես ի՞նչ կրնամ. ընել հրամանոցդ։

ՊՕՆԳԻ. Փնտոէ զտիր Բամելան, մեր ըլլալը կ'ուղեմ  
դիմանուլ։

ԵՎԸՆԻ. Կը փնտոեմ, բայց ալկին քոյրերնիդ և կած է։

ՊՕՆԳԻ. Թող կորսուի երթայ։

ԵՎԸՆԻ. Զէք ուղեր ընդունիլ զան։

ՊՕՆԳԻ. Ո՛չ։

ԵՎԸՆԻ. Ի՞նչ ըսեմ անոր։

ՊՕՆԳԻ. Թող կորսուի ըսէ։

ԵՎԸՆԻ. Այս, այս։

ՊՕՆԳԻ. Ո՛չ, Ե՛վրէ, Ե՛վրէ. Բամելան դտիր ի՞նձի։

ԵՎԸՆԻ. Բամելան շատ առաքինի աղջիկ մ' է։

ՊՕՆՖԻԼ. Ո՛Հ , Բամելան ամենաղեղեցիկ ստեղծուած մի է ,  
որուն նմանը չկայ :

ԵՎՐԻ . Թողուցէք , թաղուցէք ողորմելի աղջիկը :

ՊՕՆՖԻԼ . Բամելաս դափր ինձի :

ԵՎՐԻ . Ես ձեղի ըսի որ Բամելան շատ պարկեշտ ու համաստ աղջիկ մ' է . կը մեռնի քան թէ . . . . :

ՊՕՆՖԻԼ . Ես անոր ամենեին դէշութիւն ընել չեմ ուզեր :  
ԵՎՐԻ . Բայց պսակուելո՞ւ էք անոր հետ :

ՊՕՆՖԻԼ . Անիծեալ ըլլաս , կ'ուզեմ տեսնել զի՞նքը :

ԵՎՐԻ . Կ'երեց առանց իւսու ճը խօսելոս :

ՊՕՆՖԻԼ . Ո՞ւր կ'երըաս , ո՞ւր կ'երըաս :

ԵՎՐԻ . Քիչ մը ժամանակէ ՚ի վեր սատանայ մը գարձեր էք :  
ՊՕՆՖԻԼ . Ո՛Հ , Ե՛վրէ , Բամելան հոս բեր :

ԵՎՐԻ . Ճշմարիաը կըսեմ , կը մեղքընամ ձեղի :

ՊՕՆՖԻԼ . Այո՛ , մեղքընալու վիճակի մէջ եմ :

ԵՎՐԻ . Ես ձեր աղեկութեանը համար խրատ կու տամ :

ՊՕՆՖԻԼ . Այո՛ , սիրելիդ իմ , ըսէ , ինչ բարի խրատ տալու ես ինձի :

ԵՎՐԻ . Թողլ առւէք Բամելան որ ձեր քրոջը քով ծառայութեան երըայ :

ՊՕՆՖԻԼ . Կորսուէ դնա , դու ալ , ան ալ . հիմա կ'ըսպանանեմ զքեղ :

ԵՎՐԻ . (Չուան , չուան կապելու համաց) . ( Հուառվ կը էաիչէ :

ՊՕՆՖԻԼ . Նղովից արմատ , քսան տարի ծառայութեանդ համար ասանկ կը համարձակիս , թշուառական : (Քիչ մը կը էարդի , երդը կը նաև դարձարդի) : Բայց Եվրէն գէշ չի խօսիր , աս սիրահարութիւնը ինձի չվայելեր . պսակութմ անոր հետ , ոչ բռնաբարեմ դան , ոչ . վասն զի անիրաւութիւն պիտի ընեմ , ուրեմն ինչ ընելու է . (Գլուխու ուղանին վրայ դնելով կը մդադէ) :

ՏԻԿԻՆ ՏԱՐԱԾԻ ԵՒ ՊՈՆՔԻ.

ՏԱՐԱԾԻ. Պարոն, ի՞նչու չէք ուզեր զիս ընդունելու :  
ՊՈՆՔԻ. Թէ որ դիտէք որ ես դձեղ ընդունելու չէի, ի՞նչ  
չու եկաք :

ՏԱՐԱԾԻ. Կարծեմ թէ քոյր մը կը նայ առ համարձակու-  
թիւնը ունենալու :

ՊՈՆՔԻ. Բարի, նստեցէք եթէ կը հաջիք :

ՏԱՐԱԾԻ. Չեղի խօսելիք ունիմ :

ՊՈՆՔԻ. Թողուցէք հիմա զիս, ես մտածելիք ունիմ, ետքը  
կը խօսիք :

ՏԱՐԱԾԻ. (Կը նստի մէկոսէ). Խղբայրս շատ սրդողած է :  
անշուշտ Բամէ լային սիրահարեալ է, զիտեմ անոր բնու-  
թիւնը, բուն Անգղիացի մ' է. երբ բան մը կուղէ՝ անոր հար  
շըլլար. չէի յուսար որ Բամէ լան մեր տանը մէջ այսպիսի ան-  
կարգութեան պատճառ ըլլար. թէ որ ստուդիւ ան է պատ-  
ճառը՝ իմ ձեռքովս զան պիտի խեղղեմ. այս դործը անշուշտ  
պէտք է որ կարգի մը գրուի : — Տէր իմ :

ՊՈՆՔԻ. Սիրտ չունիմ խօսելու :

ՏԱՐԱԾԻ. (Դէկոսէ). Ոէտք է որ աղէկութիւնով բռնեմ :

ՊՈՆՔԻ. Կը ճողովէ :

ՏԱՐԱԾԻ. Կու զաք զիշերը մէկ տեղ հացկերոյթ ընենք :

ՊՈՆՔԻ. Արդէն ըսի ձեզ թէ՝ սիրտ չունիմ խօսելու ձեր  
հետը :

ՏԱՐԱԾԻ. Խիստ բարի, ալ բան չեմ խօսիք ձեզի. (ի՞նչ  
պէս մելամաղձութիւն ունի):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆԱՅԱՔ ԵՒ ԱԼԻԼԵՄ

ԱԼԻԼԵՄ. (Կեր կը ճողի առանց խօսելու, Պարոնին կը ճողե-  
աց ու եցու գէք կու պայ, ուրոնի կարդալէն եղուը կը առուրութէ

- ԹԱՅԻՐ կուս գայ ; ԵՐԱԾՈՒՅՄ ժամանակը պիտինը էլլ կանչել զան ) :
- ԱՏԿԱՆՅ. Ի՞նչ կ'ուզեք , աիկին :
- ՏԱՅԻՐԻ. Ի՞նչ են այդ դիրերը :
- ԱՏԿԱՆՅ. ԿԵՐԵցեք , քարտուղարները չեն խօսիր :
- ( էլլ մեկնէ ) :
- ՏԱՅԻՐԻ. ( մէկուսէ ) . Ըառ բարի է մեկնիլս , կէսօրուան հացին կը խօսիմ անոր հետ ) : — Պարոն , մնաք բարով :
- ՊՈՎՖԻ. Ի՞նչ պիտի խօսէիք ինծի :
- ՏԱՅԻՐԻ. Էրնօլտ ասպետ ազգականս Լօնտրայէն հասաւ :
- ՊՈՎՖԻ. Այս , ուրախ եմ :
- ՏԱՅԻՐԻ. Ետքը ձեզի այցելութիւն ընելու պիտի դայ :
- ՊՈՎՖԻ. Ուրախութեամբ պիտի ընդունիմ զինքը :
- ՏԱՅԻՐԻ. ( մէկուսէ ) . Հսնգարտ կերեի առ այժմ , ուստի փորձեմ նայիմ Բամելային համար ինչ պիտի ըսէ : ( Բարձր յայնուն ) . Զըսցեցէք ինծի , սիրական եղայրս , որոշեցի՞ք Բամելան ինծի սենեկաղետուհի տալու , ի՞նչ կը սէք , դժուարութիւն մը ունիք : Բամելան համեստ աղջիկ մ'է , մայրերնիս կը սիրեր զան , ես ալ պիտի սիրեմ . դուք հիմա հարկաւորութիւն չունիք անորմէ . անանկ մէկ երիտասարդուհի մը չըվայելեր ձեր տանը մէջ : Եղայր իմ , դուք կին չունիք , երբ ամուսնանաք՝ սիրով ձեզի ետ կը խրկեմ որ ան ատենը Բամելան ձեզի կը հարկաւորի , ի՞նչ կը սէք , կը հաճիք ինչպէս որ ըսի , առնեմ Բամելան իմ հետս առնիմ :
- ՊՈՎՖԻ. Այս , Բամելան ձեր հետը պիտի դայ :
- ՏԱՅԻՐԻ. Երթամ ուրիմ անոր խօսելու :
- ՊՈՎՖԻ. Այս , դաշեք :
- ՏԱՅԻՐԻ. ( մէկուսէ ) . Ըսւառվ երթամ , չըլայ որ զղջայ :
- ( էնթիմայ ) :
- ՊՈՎՖԻ. Այս բոնութիւնը հարկաւոր է իմ արիւնիս ազնուաթեանը , ո՞չ , աւաղ ինծի , աւելի մեռնիլս կ'ուզեմ հիմա . սիրուն հողիս Բամելա , իրաւ է որ ասկէ ետքը իմ

Քռվլս ըլլալու չես, քեզի չպիտի տեսնեմ, ու քեզի չետ իսօ՞  
աելու չեմ: (Կը մոածէ ուշակը իւ կանչը) :

### ՏԵՍԱԲԱՆ Ժ.

ԻՍԱՀԱԿ ԵՒ ՊՈՆՖԻԼ.

ԻՍԱՀԱԿ. (Կերտ իւ մոնէ իւ խոնարհի անոր դժմացը արանց իսօ՞  
ալուս) :

ՊՈՆՖԻԼ. Ո՞ւր Է վերակացուն:

ԻՍԱՀԱԿ. (Խոնարհելով իւ մեկնի):

ՊՈՆՖԻԼ. Ուրիշ ջար չկայ բամբական մտքես հանելու, պիտք  
է որ գիւղը երթամբ:

### ՏԵՍԱԲԱՆ ԺԱ.

ԼՕՆԿՄԱՆ ԵՒ ՊՈՆՖԻԼ.

ԼՕՆԿՄԱՆ. Տե՛ր իմ:

ՊՈՆՖԻԼ. Լինքոնի կոմսութեան գիւղը երթալ կ'ուզեմ:

ԼՕՆԿՄԱՆ. Հարկաւոր եղածները կը պատրաստեմ:

ՊՈՆՖԻԼ. Հեսս պիտի դաս:

ԼՕՆԿՄԱՆ. Ինչպէս որ կը հրամայեք:

ՊՈՆՖԻԼ. Իսահակն ալ գալո՞ւ է:

ԼՕՆԿՄԱՆ. Հրամերեք, տե՛ր իմ:

ՊՈՆՖԻԼ. Ըսեք տիկին Եվլուին, ան ալ թող դայ:

ԼՕՆԿՄԱՆ. Բամբական ալ պիտի դայ:

ՊՈՆՖԻԼ. Ո՞չ:

ԼՕՆԿՄԱՆ. Խեղջը մինակ մնալու է:

ՊՈՆՖԻԼ. Ո՛չ, բարի ծեր, իմացայ որ բամբական քեզի ան-  
չառայ չէ:

ԼՕՆԿՄԱՆ. (Խոնարհու). Ո՛չ, եթէ ծերացած չըլլայի:

ՊՈՆՖԻԼ. Բամբական պիտի մեկնի:

ԼՕՆԿՄԱՆ Ո՞ւր:

Պօնքիւ . Քրոջս քովը :

ԼՕՆԿՄԱՆ . Ողորմիլի՛ , զ ժքաղդ աղջիկ :

ՊՕՆՔԻՒ . Ինչո՞ւ դժբաղդ կը կոշես զան :

ԼՕՆԿՄԱՆ . Տիկին Տառւրէն , ո՛չ , դ իտէք ի՞նչտեսակ կին է :

ՊՕՆՔԻՒ . Ի՞նչ կ'ըսես , Բամէ լան աղնիւ աղջիկ մը չէ :

ԼՕՆԿՄԱՆ : Աղնիւ , այս , աղնիւ աղջիկ մ' է :

ՊՕՆՔԻՒ . Բամէ լան մասնաւոր պեղեցկութիւն մ' է :

ԼՕՆԿՄԱՆ : Ո՛չ , երանի թէ այսքան ծերացած չըլլայի :

ՊՕՆՔԻՒ . Գնա :

ԼՕՆԿՄԱՆ . Կ'երթամ :

ՊՕՆՔԻՒ . Ամեն բան սկատրանտել տուր :

ԼՕՆԿՄԱՆ : Ըստ աղէկ , տէր իմ :

### ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՊՕՆՔԻՒ . ԵՒ ԻՑԱՀԱԿ :

ՊՕՆՔԻՒ . Ամենքն ալ Բամէ լան կը սիրեն , ու ես ինչո՞ւ սիրելու չեմ : Աղնուական արիւնէ ծնելը ի՞նչ օղուտ ունի երբ զիս դժբաղդ կ'ընէ : Բամէ լան թագաւորութենէ մը աւ ւելի կ'արժէ , թէ և թագաւոր ըլլայի , իմ թագէս աւելի պիտի սիրէի զան : Այսքան զինքը սիրելս եաքը՝ ի՞նչպէս սիրտս պիտի գիմանայ որ թողում երթայ : Աւրեմն պիտի զրկուիմ ես աշխարհիս ամենէն պատուական ու երկրիս վրայ զանուած ամենէն անդին ստեղծուածէ մը : Ի՞նչ , քրոջս տամ Բամէ լան , ու ես բաժնուիմ անորմէ մէկ մ'ալ զան չտեսնելու համար . . . . : Ո՛չ , ո՛չ , այս ըլլալու բան չէ :

ԻՌԱՀԱԿ . Տէ՛ր , Մայլորտ Արգուրը եկած է :

ՊՕՆՔԻՒ . (Քիւ ճը արին անշարժ կը մնայ ու երդը իրակ) . Թող դայ : (Իսահակ դառը վելլէ) : Ո՛չ , ո՛չ , աս ըլլալու բան չէ :

### ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԱՐԴՅՈՒՆ ԵՒ ՊՕՆՔԻՒ .

ԱՐԴՅՈՒՆ . Մայլորտ :

ՊՕՆՔԻՒ . (Ոսք վելլէ իւ Բարեկ շան և կ'ըսէ) . Կսանիք :

ԱՐԴԱՒՅ. . Ներեցէք եթէ եկայ զձեղ անշանդիստ ըրբութիւն  
ՊՕՆՖԻԼ. . Պատմիւ կ'ընէք ինձ :

ԱՐԴԱՒՅ. . Զէի ուղեց որ ձեր մտածութիւնները ընդմիջեմ :  
ՊՕՆՖԻԼ. . Ո՛չ, բարեկամ, այս վայրկենիս ես ալ զբաղում  
մը ունենալ կը ցանկայի :

ԱՐԴԱՒՅ. . Խօսակցութիւն մը ունիմ ձեր հետալ, որ ձեր մը ա-  
տածմունքներէն անշռւշտ հեռու է :

ՊՕՆՖԻԼ. . Ծառ շնորհակալութեամբ մտիկ ընելու եմ ձեղ,  
բայց նախ թէյ խմենք : — Ո՞վ կայ հոգ :

ԻՍԱՀԱՅ. . Ի՞նչ կը հրամայէք, տէր իմ :

ՊՕՆՖԻԼ. . Թէյ բեր. (Խառնուկ է ուղղվ ՁԵՒՔՆԵՐ), Հոս մտիկ ըրբ.՝  
շաքարողի ալ բեր : (Խառնուկ է ԵՐԵՄԱԳ) : Մայլորտ, թէյը շա-  
քարողիսպ խմենք :

ԱՐԴԱՒՅ. . Ծաքարողին խիստ լաւ ըմպելիք մ' է ստամոքսի  
համար :

ՊՕՆՖԻԼ. . Ի՞նչ խօսելիք ունիք ինձի :

ԱՐԴԱՒՅ. . Զձեղ սիրող բարեկամները ձեր ամուսնութեանը  
կը ցանկան :

ՊՕՆՖԻԼ. . Ուրեմնին բարեկամներս դո՛չ ընելու համար կի՞ն  
մը առնել պէտք եմ :

ԱՐԴԱՒՅ. . Այո՛, Մայլորտ, ձեր գերգաստանը միշտ Խօն-  
տրայի պայծառութիւնը և խորհրդարանի վայելչութիւնն եղած  
է : Տարիները շուտով կանցնին, ձեր ծերութեան օրերը պի-  
տի սպահէք ամուսնութեան համար . ո՛վ որ ուշկարդուի, դիւ-  
րութեամբ շտեսներ իր զաւակներուն յառաջադիմութիւնը :

ՊՕՆՖԻԼ. . Մինչև հիմա թշնամի էի ամուսնութեան :

ԱՐԴԱՒՅ. . Հիմա ի՞նչ կը մտածէք :

ՊՕՆՖԻԼ. . Կերպ կերպ մտածմունքներով շփոթուած եմ :

ԱՐԴԱՒՅ. . Երկու գերգաստան կան, որոնց հետ ամուսնու-  
թեան գաշնադրութիւն ընելը յարմար է ձեզի համար, ու  
ձեզի կը վայելը կամ Մայլորտ Բարումին աղջիկը և կամ  
Մայլորտ Բէնմուրին եղուօր աղջիկը առնել :

ՊՕՆՖԻ. . Ի՞նչ պատճառաւ յարմար կը սեպուին ինծի հաշմար այդ ձեր ըսած զերգաստանները :

ԱՐԴՈՒՐ. Վասն զի երկուքն ալ խիստ հարուստ են :

ՊՕՆՖԻ. . Հարստութիւնը իմ Աստուածս չէ :

ԱՐԴՈՒՐ. Արիւննին խիստ մաքուր ու անարատ են :

ՊՕՆՖԻ. . Ա՛յ, աս ի՞նչ մեծ առանձնաշնորհ մի է, սիրելի բարեկամ, և որովհետեւ իմ հաղստանելու բարեբարութիւն աւնիք, չէք հաղնիք ուրեմն ինծի հետ խօսելու :

ԱՐԴՈՒՐ. Ասանկ գործերու համար ձանձրանալու չէ իօս սելին :

ՊՕՆՖԻ. . Անկեղծութեամբ խօսեցէք ինձ, կարծէք թէ աղնուական արիւնէ ծնած մարդ մը ամուսնանալու ժամանակ պարտաւո՞ր է արդեօք աղնուական զերգաստանէ աղջիկ առնելու :

ԱՐԴՈՒՐ. Անպատճառ ամեն աղնուական այնպէս ընել պէտք է չեմ ըսեր, բայց առ հասարակ բարեկարդութիւնը մեղի այնպէս ընել կը սորվեցընէ :

ՊՕՆՖԻ. . Բայց այս բարեկարդովթեան մէջ բնաւ բացառութիւն չը լլար:

ԱՐԴՈՒՐ. Այո, չկայ կարդագրութիւն մի, որ բացառութիւն չունենայ:

ՊՕՆՖԻ. . Եւրեմն կը խնդրեմ՝ յայտնեցէք ինծի թէ ի՞նչ պարագ այի մէջ թպյլտուութիւն կրնայ ըլլալ աղնուական մարդու մը աղնուական դարմէ չեղող աղջիան մը հետ ամուսնանալու համար:

ԱՐԴՈՒՐ. Երբ աղնուական առպես մը հարուստ չէ, ու աղնուական արիւնէ չեղող աղջիկը խիստ հարուստ է:

ՊՕՆՖԻ. . Աղնուականութիւնը գրամուլ վոխանակելը վատութեամբ լր վաճառաշահ ըլլալ է:

ԱՐԴՈՒՐ. Երբ պատուաւոր ասպետ մը պարտաւորեալ կը լլայ աղնուական չեղող համեստ օրիորդի մը հետ ամուսնանալ:

ՊՕՆՖԻ. . Ավ որ պարտաւորութեան համար կ'ամուսնանայ, անշուշտ ետքը պիտի զղջայ:



ԱՐԴՈՒԵՐ. Երբ մասնաւոր ասպետ մը կը յուսայ մնջ պաշտօնեայի մը աղջկան հետ ամուսնանալով՝ իր հարստութիւնը աւելցընելու :

ՊՕՆՖԻԼ. Պէտք չէ դոհել աղնուականութիւնը անհաւաստի հարստութեան մը համար :

ԱՐԴՈՒԵՐ. Երբ ասպետ մը սիրահարեալ է համստ աղջկան մը գեղեցկութեան :

ՊՕՆՖԻԼ. Ո՛չ, Մայլըրա, ուրեմն աղնուական մը կրնայ սիրոյ համար ամուսնանալ աղնուական չեղող աղջկան մը հետ :

ԱՐԴՈՒԵՐ. Այո՛, կրնայ ընել, ու շատ օրինակներ ունինք, բայց խոհեմութիւն չէ ընելու :

ՊՕՆՖԻԼ. Խոհեմութիւն չէ ըսիք ընելու, ըսէք ինծի ինչ բանի վրայ կը կայանայ մարդուս խոհեմութիւնը :

ԱՐԴՈՒԵՐ. Համեստութեամբ կենցաղավարուելու, օրէնքները պահելու, և իւր անձնական պատիւը պաշտպանելու, շատ աղէկ։ Բայց թէ որ ասպետ մը նուաստ գերդաստանէ բայց խելացի և համստ վարքով աղջկան մը հետ ամուսնանայ, կը մըանէ արդեօք իր համեստութեանը :

ՊՕՆՖԻԼ. Համեստութեամբ կենցաղավարուելու, օրէնքները պահելու, և իւր անձնական պատիւը պաշտպանելու, շատ աղէկ։ Բայց թէ որ ասպետ մը նուաստ գերդաստանէ բայց խելացի և համստ վարքով աղջկան մը հետ ամուսնանայ, կը մըանէ արդեօք իր համեստութեանը \*

ԱՐԴՈՒԵՐ. Ո՛չ, արդարեւ, համեստութիւնը ամեն աստիճանի մէջ կը պաշտպանուի :

ՊՕՆՖԻԼ. Ըսէք կ'աղացէմ, ասանկ ամուսնութեամբ մը ասպետը օրինաց գէմ կը մեղանչէ :

ԱՐԴՈՒԵՐ. Ո՛չ, ստուգիւ ո՛չ, վասն զի բնութիւնը հասարակաց մայր է և անորոշակի իր զաւակները կը սիրէ, և իւրենց միաւորութեանը անորոշ զոհ է :

ՊՕՆՖԻԼ. Կենցաղավարութեան օրինաց գէմ կը մեղանչէ :

ԱՐԴՈՒԵՐ. Ո՛չ, վասն զի ամուսնութիւնը աղատ պէտք է որ ըլայ, ու արդելք չկրնար ըլլալ երկու հոգիի մէջ, օրոնք զիրար կը սիրեն :

ՊՕՆԳԻԼ. ԽԵՂՆի մասց օրինաց գէմ կը մեղանչէ :

ԱՐԴՈՒՐ. Չկայ զրուած օրէնքը մը , որ ասանկ ամուսնութեան մը գէմ ըլլայ :

ՊՕՆԳԻԼ. Աւրեմն ի՞նչ Հիման վրայ պէտք է հաստատել , որ ազտա ըլլայ օրինաց գէմ մեղանչէլ :

ԱՐԴՈՒՐ. Հասարակաց կարծեաց համակերպելու է :

ՊՕՆԳԻԼ. Ի՞նչ կիմանաք դուք հաստակաց կարծիք ըսելով :

ԱՐԴՈՒՐ. Մարդոց մտածմանց հաճութիւնը :

ՊՕՆԳԻԼ. Մարդիկ շատ անդամ կերպ կերպ կը խորհին , ու անոնց կարծեաց համաձայն ըլլալու համար պէտք է մարդ խօսակցութեան ամեն մէկ պարագային իր կարծիքները փոխել , որոնցմէ կը յառաջանան ֆոփոխամտութիւն , անհաստատութիւն , և անհաւատարմութիւն , որոնք իր կարծիքին վրայ հաստատ մնալէն աւելի գէւ են :

ԱՐԴՈՒՐ. Բարեկամ , ազէկ կը խօսիք , սակայն շատ բաներ պէտք է որ զահէ մարդ իր անձնական պատիւը պահելու համար :

ՊՕՆԳԻԼ. Իր անձնական պատիւը պահել պէտք է . սակայն կ'ապաշեմ , ըսէք ինձ , ասպետ մը ազքատ համեստ աղջկան մը հետ ամուսնանալով , իր անձնական պատոյն կը զնառէ արդեօք :

ԱՐԴՈՒՐ. Իր ակնուական արիւնին կը զնառէ :

ՊՕՆԳԻԼ. Մեկնեցէք ինձ , ի՞նչպէս կընայ ամուսնութիւնը ասպետին երակներէն արիւնը փոխել :

ԱՐԴՈՒՐ. Աս բանս չեմ կրնար հաստատել :

ՊՕՆԳԻԼ. Հապա ո՞րն է այն արիւնը , որուն կը զնառէ :

ԱՐԴՈՒՐ. Այն արիւնը որ զաւակաց կ'անցնի :

ՊՕՆԳԻԼ. Ոչ , մահու չափ վիրաւորեցէք զիս :

ԱՐԴՈՒՐ. Մայլորտ , խօսեցէք ինձ Ճշմարիտ բարեկամութեամբ , ստուգիւ դուք աս պարագայիս մէջ կը գտնուիք :

ՊՕՆԳԻԼ. Սիրելի բարեկամ , ասանկ մէկ ամուսնութենէ մը չկած զաւակները աղնուական չե՞ն :

ԱՐԴՅՈՒՆ . Հօր կողմանէ աղնուական ե՞ն :

ՊՕՆՓԻԼ . Բայց միթէ հայրը չէ որ աղնուականութիւնը կու տայ :

ԱՐԴՅՈՒՆ . Բարեկամ, անանի սասաիկ կը բարկանաք, որ կը կասկածիմ թէ այս վէճը մի միայն ձեզի համար է :

ՊՕՆՓԻԼ . (Լուս կը դիմայ) :

ԱՐԴՅՈՒՆ . Արտերնիգ բացեք ինձ, յայտնեցեք Աշմարտութիւնը, ու ես պիտի աջնատիմ անանկ խրատներ տալ ձեզի, որով ձեր սիրու կարենայ հանդարսիլ :

ՊՕՆՓԻԼ . (Ընդէլքն) . Թող երթայ բամել լան Տառըի ին հետ :

ԱՐԴՅՈՒՆ . Շատ իրաւունքներ կու տան դուրսէն հասարակաց կարծիքներուն, որոնք եսքը փոփոխելով ժամանակին պարագաներուն կը յարմարցրնեն. աղնուականութիւնը շատ աստիճաններ ու շատ կարգեր ունի, որոնք արհամարչել պէտք չէ. Ճեր մտածմունքները անշուշտ նուաստ հարսանեաց վրայ չկայանար :

ՊՕՆՓԻԼ . (Ընդէլքն) . Եփնքօնի կոմութեան դիւզը երթաւլու եմ :

ԱՐԴՅՈՒՆ . Թէ որ պատրողական դեղեցկութիւն մը իւր անը մաքրուր բոցերով սպառնառ կ'ըլլայ վասութեամբ. Ճեր արեան մաքրութիւնը սկցընել . . . :

ՊՕՆՓԻԼ . Ես պատրողական դեղեցկութիւն մը սիրած չեմ :

ԱՐԴՅՈՒՆ . Մայլորս, մնաք բարեառ :

ՊՕՆՓԻԼ . Աղասեցեք թէյլ խննք : — Տղա՛, Հո՛ս եկու :

### ՏԵՍԱՐԱԿ Ժ.Դ.

#### ՆՐՅԱՔ ԵՒ ԷՍԱՀԱԿ

ԻՍԱՀԱԿ . Ի՞նչ կը հրամայէք :

ՊՕՆՓԻԼ . Ես քեզի թէյ չպատուիրեցի՞ :

ԻՍԱՀԱԿ . Վերակացուն չպատրաստեց գեռ :

ՊՕՆՓԻԼ . Ռնբան, շուտ թէյ և օդի բեր :

ԻՍԱՀԱԿ. Բայց, Տէր իմ:

ՊՕՆՓԻՒ. Մի պատասխանեք, չիմա զլուխդ կը ջախջախեմ։  
(Վասհակ է Եղիշեաց)։

ԱՐԴՅՈՒԹ. (Խաչիլին). Ամյլորալ բարկացած է։

ՊՕՆՓԻՒ. Կստինք։

ԱՐԴՅՈՒԹ. Էրնօլտ ասպետը տեսաք դուք։

ՊՕՆՓԻՒ. ԱՇ, բայց կարելի է այս առառու ինձի տեսաւթեան դայ։

ԱՐԴՅՈՒԹ. Հինգ տարի է որ Ճամբորդութիւն կ'էնէ, բոլոր եւրոպան պարտեցաւ։

ՊՕՆՓԻՒ. Ազնուականի մը ամենէն դեղեցիկ ուսումը աշխարհ տեսանել ու պարախըն է։

ԱՐԴՅՈՒԹ. Այս, ով որ իր քաղաքէն գուրս չելլեր՝ շատ նաև իսպաշարեալ կ'առրի։

ՊՕՆՓԻՒ. Կան անանի մարդիկ, որոնք այնպէս կարծեն թէ իրենց հայրենիքէն զատ ուրիշ աշխարհէք չկայ։

ԱՐԴՅՈՒԹ. Ամբարտաւան մարդիկ Ճամբորդութիւն ընելով իսնարհութիւն կը սորպին։

ՊՕՆՓԻՒ. Երբեմն ալ՝ յիշար մարդիկ Ճամբորդութիւն ընելով ևս առաւել խելքերնին կը խանդարեն։

ԱՐԴՅՈՒԹ. Յիբաւի աշխարհս ազւոր գրքի մը կը նմանի, որմէ կարդալ չո թացողը օգուտ չկրնար քաղել։

(Վասհակ նէյով, օղիով ու ժամանելով ներս կը ճոնէ և բոլորն ալ սեղանին զբայ իը դնէ, ուսնիվ ժամանելու իը լցոնէ,  
մէկ ժամանել Արդուրին իսու որայ ու մէկ օր ալ ինչ է առաջնորդ և իը իմբն)։

ԻՍԱՀԱԿ. Տէր իմ։

ՊՕՆՓԻՒ. Ե՞նչ է։

ԻՍԱՀԱԿ. Այլորա քումպէք և Էրնօլտ ասպետը կ'ուղեր իրենց յարդանիքը մատուցանել ֆեղ։

ՊՕՆՓԻՒ. Թող ներս հրամայեն։ (Վասհակ է Եղիշեաց)։

ԱՐԴՅՈՒԹ. Տեսնենք ի՞նչ օգուտ քաղած է մեր Ճամբորդը։

ՊՕՆՓԻՒ. Նմէ խսհեմութիւն չստացեր է, քիչ բան շահածէ։

## ՏԵՍԱՐԾՆ ԺԵ :

ՄԱՅԼՈՒՏ ՔՈՒՄՊԵՔ ԵՒ ՆԱՅՆՔ

(Ի ԱԿԱԽ ԱՄԱԿ ՏԸ ԻԸ ԲԵՐԵ Ա ԻԸ ԹԵՂԻՒԵ) :

ՔՈՒՄՊԵՔ . ՏԵՐ Ի՛Մ :

ՊՕՆՖԻԼ . Բարի եկաք :

ԱՐԴՈՒՐ . Բարի եկաք , բարեկամ :

ՊՕՆՖԻԼ . Հրամայեցէք միատեղ թէլ խմնը :

ՔՈՒՄՊԵՔ . Թէլը չմերժուիր :

ԱՐԴՈՒՐ . Թէլը առողջաբար ըմպելիք մ' է :

ՊՕՆՖԻԼ . (Քառալելին) . Օղի ալ կուզէք :

ՔՈՒՄՊԵՔ . Այս :

(Ի ԱԿԱԽ ԻԸ ԷՇՋԱՆԵ Ա ԻՆ ՊԱՅ) :

ՊՕՆՖԻԼ . Ո՞ւր է առպետը :

ՔՈՒՄՊԵՔ . Իր ազգական աիկնօջ զնաց , հիմա կու դայ :

ԱՐԴՈՒՐ . Ասպետը ինչպէս է , օդուտ քաղե՞ր է իր ըրած ձամբռորդութիւններէն :

ՔՈՒՄՊԵՔ . Ըատ կը խօսի :

ՊՕՆՖԻԼ . Գէշ բան է այդ :

ՔՈՒՄՊԵՔ . Ըատ բան դիտէ :

ՊՕՆՖԻԼ . Ազէկի թէ զէշ :

ՔՈՒՄՊԵՔ . Աէկէն ու մէկալէն ալ :

ՊՕՆՖԻԼ . Վատանզաւոր բան է շիտակը :

ԱՐԴՈՒՐ . Աչաւասիկ կու դայ :

ՔՈՒՄՊԵՔ . Ինչպէս զաղղիացիի մը հովը ունի :

ՊՕՆՖԻԼ . Փարիզի հովը միշտ յաջողակ չէ . Լօնտրայի ջըս բանց քը նաւելու համար :

## ՏԵՍԱՐԾՆ ՓԶ .

ՆԱՅՆՔ ԵՒ ԷՐՆՈԼՏ ԱՅՊԵՏ

(Ի ԱԿԱԽ ԱՄԱԿ ՏԸ ԻԸ ԲԵՐԵ Ա) :

ԷՐՆՈԼՏ . Մայլուտ Պօնֆիլ , Մայլուտ Արդուր , իմ սիրելի բարեկամիներս , ձեր խոնարհ ծառան :

ՊՕՆԳԻՆ. Բարեկոմի՛, բարի եկաք, կը խնդրեմ հրամայեցէք  
նստեցէք:

ԱՐԴՈՒՐ. Աւրախ եմ տեսնելով ձեր առողջ հայրենիք դառ  
նալնիդ:

ԷՐՆՈՅԻ. Քիչ ժամանակ պիտի մնամ իմ հայրենիքս:  
ԱՐԴՈՒՐ. Խչո՞ւ համար:

ԷՐՆՈՅԻ. Անոր համար որ այսուհետեւ Լօնտրա չեմ կրնար  
մեալ, ո՛չ, ինչ զեղեցիկ բան է քաղաքներ, ազգեր տես-  
նելը, այսօր հոս, վաղը հոն, պատուաւոր ընդունելութիւն-  
ներ, փառաւոր արքունիք, վաճառոց տառապւթիւն, ժողո-  
վրդոց բաղմանթիւն, դործատանց շքեղութիւններ ևա. ա-  
սանք տեսնելով՝ մասձեցէք անզամ մը ինչպէս կրնամ ես  
ասկէ ետքը Լօնտրա մնալ, ի՞նչ կ'ուղէք ընեմ:

ԱՐԴՈՒՐ. Լօնտրա արհամարհելու քաղաք չէ, անոր հարս-  
տութիւնը, զիրքին զեղեցկութիւնը, ևա. ևա, դիւրութեամբ  
ուրիշ քաղաքներու հետ չփոխութիւն:

ԷՐՆՈՅԻ. Ո՛չ, ներեցէք ինձ, բան չէք զիտեր, որով-  
հետեւ Փարիզ, Մատրիտ, Լիսաոն, Վենետիկ, Հռոմ,  
Բիլան, Վենետիկ, աս ամեն մայրաքաղաքները տե-  
սած չէք դուք, հաւատացէք ինձ, կրկին կ'ըսեմ ձեզ որ  
բան չէք զիտեր:

ՊՕՆԳԻՆ. Խոհեմ Ճամբորդ մը իր հայրենիքը երբէք չի-  
պահարակեր: Ասսետ, թէյ կ'ուղէք:

ԷՐՆՈՅԻ. Շնորհակալ եմ, չգուշն խմբի, Ասպանիոյ մէջ  
խիստ պատուականը կը շինեն, նոյնպէս Խտալիոյ մէջ, ուր  
զրեթէ առ հասարակ կը զործածուի, բայց առանց վաճառքէն  
և կամ շատ քիչ կը գնեն մէջը. և ամեն քաղաքներին է իւ-  
լանու չգուշն զերազանց է, Վենետիկ ընտիր սուրճ կը  
խին, իսկ Աղեքսանդրիա Սօլա ըստած Եմինի սուրճը, որ  
զարմանալի կերպիւ մը կը պատրաստեն: Ասքօլիի քողաքը  
ըմզելիքները և օշարակները խիստ ընտիր են, որոնց նմանը

դրեթե ուրիշ քաղաք չեն կրնար շինել։ Ամեն մեկ քաղաք  
իր առանձնաշնորհութիւնը ունի . Ահնա մեծ ընդունելու<sup>2</sup>  
թիւններ կը ըլլան . Փարիլ, ո՞չ, իմ թանկաղին Փարիլու,  
իմ սիրական Փարիլս, որուն բնակչաց քաղաքավարութիւնը,  
սիրահարութիւնը, իրարու նախանձութիւն չունենալով և  
առանց կատկածանց քաղցր կենակցութիւնները չետակը նա-  
խանձելի են . ուր ամեն օր տօն է, ամեն օր ողարտեղները կը  
յաջախեն, ամեն օր ուրախութիւն, զբոսանք, զգարձու-  
թիւն, պարք . ո՞չ, Ի՞նչ զեղեցիկ աշխարհ . մեկ խօսքով ան-  
տեղ ազատորեն կը վայելեն աշխարհիս ամեն աեսակ զաւար-  
ձութիւնները :

ՊՕՆԳԻՆ. (Կը էամով) . Տղմ, ո՞ւր ես :

ԽՍՏՀԱԿ. Ի՞նչ կը հրամայեք, տեղ իմ :

ՊՕՆԳԻՆ. Բաժակ մը ջուր բեր տսպետին :

ԵՐԱՅՈՒԹ. Ի՞նչ ընելու համար ջուր բերել կու տաք ինձ :

ՊՕՆԳԻՆ. Այսքան խօսելով անշուշտ որկարնիդ ցամքեցաւ :

ԵՐԱՅՈՒԹ. Ա'չ, ո՞չ, անհանդ իսս մի՛ ըլլաք . Լօնտրայէն

մեկնելես 'ի վեր խօսել սարված եմ :

ՊՕՆԳԻՆ. Այս, աւելի դիւրութեամբ խօսիլ կը սորվի  
մարդ քան թէ չխօսիլ :

ԵՐԱՅՈՒԹ. Բայց աղէկ խօսիլը այնքան դիւրութեամբ չսոր-  
վուիր :

ՊՕՆԳԻՆ. Ծատ խօսողը չկրնար միշտ աղէկ խօսիլ :

ԵՐԱՅՈՒԹ. Սիրելի Մայլորա, գուրք Ճամբռորդութիւն ըրած չէք :

ՊՕՆԳԻՆ. Բայց գուրք Ճանապարհորդելու քաղձանքս կորսն-  
ցընել կու տաք ինձ :

ԵՐԱՅՈՒԹ. Ի՞նը՞ւ համար :

ՊՕՆԳԻՆ. Աը վախնամ որ ես ալ օդուած անսնելու տեղը  
չվնասեմ :

ԵՐԱՅՈՒԹ. Ծատ տիսուր ըլլալը մարդուս նախապաշարեալ.  
Հպարտութենէն առաջ կու զայ . աղէտք է որ մարդս զուար-  
թաղէմ ու ընկերասէր ըլլայ, քան դի աշխարհս անոնց հա-

Ժամանակ է , որտեղ զինքը կը ճանչնան ու անոր համեստ  
ու պարիեցու զուարժութիւններէն օգուտ քաղելը զիտեն :  
Ի՞նչ կը շահէիք ձեր սեամաղձութենէն . ընկերութեան մը մէջ  
դժոնուած տաենիիդ՝ տասը խօսք հաղիւ կը խօսիք մէկ ժամու  
մէջ . թէ որ պարտելու ելլէք , աւելի կ'ուզէք մինակ դժոնուիլ  
քան թէ ընկերներով : Օրիորդի մը հետ սիրահարութիւն  
ըրած ժամանակնիդ՝ կ'ուզէք որ գուրք չխօսեցած՝ ան ձեր միտքը  
հասկընայ . եթէ Օբերաներկայացուած թատրոն մը երթաք ,  
լալէն ուրիշ բան չէք ըներ , ու կ'ուզէք միայն ողբեր-  
գութիւններ լսել , որտեղ ձեր մելամաղձութիւնը կ'ըզբաւ-  
զեցրնեն : Անդ զիական կատակերդ ութիւնները թէպէտե հե-  
տաքրքրական , քայլ լի են բարոյական խրատներով , բարի  
օրինակներով , բարեկիբթ գաստիարակութիւններով . բայց  
ինչ օգուտ որ չին զուարժացըներ մարդս . ասոր հակառակը՝  
խտալիոյ մէջ կը զուարժանաս զեղեցիկ ու ծիծաղական կա-  
տակերդութիւններով , որոնք զրեթէ ամեն կերպ ծիծաղա-  
շարժ խօսքերով լի են :

ԱՐԴՈՒԵՐ . (առաջ էլլէլ) . Մայլորտք , վերստին տեսնուինք :  
(էլլէլլայ) :

ԷՐՆՈՅԻՍ . Նըթաք բարեաւ . — Անենետիկի բարեկենդանը  
տեսնելու արժանի է . ամեն կողմ ուրախութեան ձայններ կը  
շառուին , ամեն կողմ դիմակաւորաց խումբեր , և ամեն կողմ հա-  
սարակաց պարահանդէսներ կը լլան , ուր զեշեր ցորեկ թուղթ  
կը խաղան և ուրիից ոմանք ուրախութեամբ . և ոմանք տըրտ-  
մութեամբ կը բաժնուին . ալ որ մէկը պատմեմ :

ՔՈՒՄՊԵՔ . (առաջ էլլէլ) . Բարեկամ , ներեցեք , չեմ կը նար  
աւելի նստիլ :

ՊՕՆԳԻՆ . Ասպետ , եմէ ասոնք են որ ձեղ ուրախութիւն  
կը պատճառեն , չեմ դիտեր ինչ մտածեմ ձեր կացութեանը  
համար : Աւրեմն Խտալիոյ այն իմաստուն և զիտուն անձինքը  
ասանկ չնչին բաններու համար կը խնդան : Ազնուականը պէտք  
է զայելու տեղ և յարմար ժամանակ խնդայ . իսկ առասպել :

անկարգ և մութ խօսքերուն և խօսակցութիւններուն վրայ ծիծաղիլը ուսմիկ մարդոց կը վերաբերի . ներեցէք խօսիմ ձեզ այն աղատութեամբ որ ազգական մը կամ բարեկամ մը կրնայ խօսի , գուք ժամանակին առաջ Ճամբորդութիւն ըրեր եք : Այս Ճամբորդութիւնը ընելնէդ առաջ , պէտք էիք պատմութիւն , բանագիտութիւն , մաթէմաթիքա և փիլիսոփայութիւն սորվիլ , որոնք խիստ հարկաւոր են Ճամբորդութիւն ընող ասպետի մը . եթէ ասոնք սորված ըլլայիք , ձեր խելքը չէիք տար Փարիզի , Վենենայի տեսակ տեսակ զուարժութիւններուն ու Խտալիոյ կատակերդութեանց : (Այ Թիկի):

ԵՐԿՈՒՏ . Մայլորաբ չդիտեր ինչ կ'ըսէ , ինչու որ Ճամբորդութիւն ըրած չէ : (Այ Թիկի):

### ՏԵՍԱԲԱՆ ԺԷ :

#### ԲԱՍԻԼԱ առանձին :

ԲԱՏԵԼԱ . Այս տանը մէջ մնացած տմῆն վայրկեանները ինծի համար մեղանչական են , ու իմ համեստութեանս նաև խատինք կը բերեն . քանզի տէրս իր կիրքերուն ստնձը թողացեր է , ու զիս կը հալածէ . ես ալ պէտք է որ փախչիմ անորմէ , աւազ ինծի . Մայլորաբ իր կործանումն պատճառել կ'ուզէ . արդեօք երթամ աս տունէն ու բնանեացս ծայլ վերապառնամ , ուր որ սկսայ երջանկութեանս առջի պարզեները վայելել : Թողում տիկին Եվրէն , որ զիս աղջուանը պէս կը սիրէ : Մէկ մալ տեսնելու չեմ պարոն Լոնկմանը , այն սիրուն ծերունին , զոր հօր նման կը պատում : Ոիսիր բաժնուիմ աս աանը բոլոր ծառաներէն , որոնք զիս իրենց քրոջը պէս կը սիրեն : Ո՛չ , պիտի զառուիմ ես ասանկ մէկ աղջուական և առաքինի տէրէ մը . բայց ո՛չ , իմ տէրս ասկէ ետքը առաքինի չէ . ան իր սիրու փոխեց ու զառան մը եւ զաւ մարդու կերպարանքով : Ուրեմն պէտք է որ փախչիմ աս տունէն , գժգոհութեամբ պիտի մեկնիմ , բայց անշուշտ պէտք

է որ մեկնիմ . եթէ Մայլէտին դարձեալ զիս ուզէ , պիտի  
երթամ անոր քովը կենամ որչափ ժամանակ որ կարենամ՝ առ  
ամեն բաները հօրս կ'իմացընեմ , և եթէ ուրիշ անակնիալ  
զիգուած մը պատահելու ըլլայ , ան ժամանակը կ'երթամ հօրս  
հետ ապրելու՝ իմ ծնած ազքառութեանս մէջ . դժբաղդ Բա-  
մէլու : (Քու լոյ)

### ՏԵՍԱՐԱՆ ԺԲ .

#### ԼՕՆԿՄԸՆ ԵՒ ԲԱՄԷԱ .

ԼՕՆԿՄԸՆ . Բամէլու :

ԲԱՄԷԱ . Տէր իմ :

ԼՕՆԿՄԸՆ . Կու լան :

ԲԱՄԷԱ . Ա՛չ , այս :

ԼՕՆԿՄԸՆ . Սրասութներդ սիրոս կը վիրաւորեն :

ԲԱՄԷԱ . Սրափդ ազնուութիւնն է որով զիս կը մեղքրնաս :

ԼՕՆԿՄԸՆ . Սիրուն հսղիս , շատ սիրելի աղջիկ մ' ես :

ԲԱՄԷԱ . Ա՛չ , պարսն Էօնկման , ասկէ եաքը մէ կղմէ կ տես .  
նելու չենք :

ԼՕՆԿՄԸՆ . Ի՞նչպէս , միթէ կարելի՞ է :

ԲԱՄԷԱ . Մայլորաը իւր քրոջը քովը ծառայելու կը դրկէ  
զիս :

ԼՕՆԿՄԸՆ . Մայլէտիին հետ պիտի չկրնաս անցնիլ , սիրե-  
լիդ իմ Բամէլու :

ԲԱՄԷԱ . Հօրս տունը կ'երթամ :

ԼՕՆԿՄԸՆ . Գի՞ւղը :

ԲԱՄԷԱ . Այո՛ , զիւղը , երկիրը դործելու :

ԼՕՆԿՄԸՆ . Այս աղուորիկ ձեռքերովդ :

ԲԱՄԷԱ . Պէտք է հնազանդիմ ճակատադրոյս :

ԼՕՆԿՄԸՆ . (Կը մեղքընամ զինքը) : (Քու լոյ) :

ԲԱՄԷԱ . Ինչո՞ւ կու լաս :

ԼՕՆԿՄԸՆ . Ա՛չ , Բամէլու , քեզի համար կու լամ :

ԲԱՄԷԱ . Աստուած օրհնէ քու բարի սիրադ , ո՛չ , շնորհք

Քը ըրէ ինձ , ան հսամակը դիւղը ծնողաց զբկէ :

ԽօնկՄԱՆ . Գլխուս վրայ , անհոգ եղիք որ անվտանդ տեղը կը հացընեմ : Բայց ով Սստուած , ի՞նչպէս զմեղ պիտի թողուս :

ԲԱՄԵԼԱ . Հաւստատ ինձ , մեռիլս կու զոյ :

ԽօնկՄԱՆ . Ա՛յ , աղջիկս :

ԲԱՄԵԼԱ . Ի՞նչ բուլ կուկես :

ԽօնկՄԱՆ . Ես խիստ ծեր եմ :

ԲԱՄԵԼԱ . Այնչափ տեիի պատոյ որժանի ես :

ԽօնկՄԱՆ . Ըսէ ինձ , սիրուն հոգիս , պիտի կարդութիւն :

ԲԱՄԵԼԱ . Գմուարութեամբ :

ԽօնկՄԱՆ . Ինչու գմուարութեամբ :

ԲԱՄԵԼԱ . Անոր համար որ կամքս վիճակիս հետ չհամամայնիր :

ԽօնկՄԱՆ . Կարդուելու ըլլան , որո՞ւ հետ պիտի կարդուիս :

ԲԱՄԵԼԱ . Մարդու ձայն կը լսեմ , տիկին Եվլեն պիտի ըլլայ :

ԽօնկՄԱՆ . Աս ըստծնուս վրայ ուրիշ անդամ՝ կը խօսինք :

ԲԱՄԵԼԱ . Կարելի է որ ասկէ ետքը ժամանակ չունենանք :

ԽօնկՄԱՆ . Ինչու համար :

ԲԱՄԵԼԱ . Գուցէ այս իրիկուն երթամ :

ԽօնկՄԱՆ . Աի որոշեր այսպէս շուտով մեկնելու :

ԲԱՄԵԼԱ . Ահա , տիկին Եվլեին հետ Մայլէտին :

ԽօնկՄԱՆ . Բամէ լս , ինձի հետ չխօսեցած չերթաս :

ԲԱՄԵԼԱ . Ար ջանամ զքեղ տեսնելու :

ԽօնկՄԱՆ . (Ա՛յ թէ քսան տարի պակաս ըլլար տարիք) .

— Մհամ բարեւած , աղջիկս :

ԲԱՄԵԼԱ . Աստուած առողջ պահէ զքեղ :

ԽօնկՄԱՆ . Աստուած օքչնէ զքեղ : (Աը Ժէնէ) :

ԲԱՄԵԼԱ . Աղօրմնլի ծեր , անկեղծ սիրով կը սիրէ զիս . իրաւ է որ Մայլորան ալ կը սիրէ զիս . բայց , ա՛յ , ի՞նչ պահապահութիւն սիրելու . պարոն Լօնիմանիսէ ըլ անմեղ է .

իսկ Սայլութը զիս կարծանելու համար կը սիրէ . վայ ինչ և  
երբ մեկնելու եմ՝ այս աղետալի տունեն :

### ՏԵԱՄԻՐԵՆ ԺԹ .

ՏԵԿԻՆ ՏԵԱՄԻՐԵ , ՏԵԿԻՆ ԵՎՐԻ ԵՒ ԲԱՄԵԼԱ .

ՏԵԱՄԻՐԵ , Բամիլը :

ԲԱՄԻՐԵԱ , Ապյլէտի , Հրամայեցիք :

ՏԵԱՄԻՐԵ , Աերջադէս եղբայրս Ողջորատը համոզուեցաւ որ  
զուն հետա դաս . Հիմա կառքովս պիտի տանիմ զքել . շու-  
տով պատրաստուե :

ԲԱՄԻՐԵԱ , (Վայ ինձ) : — Ծուառվ կը պատրաստուիմ :

ՏԵԱՄԻՐԵ , Սիրուվդ պիտի զան :

ԲԱՄԻՐԵԱ , Զեզի ծառայելու համար ունենալու պատիւս իմ  
բաղաւորութեանս պիտի տամ :

ՏԵԱՄԻՐԵ , Հաւասափի ըլլաս որ քեզի ամեն բարեք սիտի ընկմ :

ԵՎՐԻ , (Աղոքմիլի Բամիլը) : (Կու լայ) :

ԲԱՄԻՐԵԱ , (Վայէն) . Ի՞նչու կու լաս :

ԵՎՐԻ , Աիրելիդ իմ քամիլա , չեմ կրնար զքել տեսնել  
որ ինձմէ բաժնուիր :

ԲԱՄԻՐԵԱ , Կը յուսամ որ Ապյլէտիս կը ներէ որ դաս եր-  
քին զիս տեսնելու :

ԵՎՐԻ , Գուն զալու չեմ զիս տեսնելու :

ԲԱՄԻՐԵԱ , Ա'չ , տիկին , զալու չեմ :

ԵՎՐԻ , Բայց ինչու , սիրելիս , ինչո՞ւ :

ԲԱՄԻՐԵԱ , Ապյլէտիս չեմ ուղեր մինակ թողուլ :

ՏԵԱՄԻՐԵ , Եթէ ինձի հետ սիրով ըլլաս , ես ալ զքել  
պիտի սիրեմ :

ԲԱՄԻՐԵԱ , Բոլոր սրաովս ու հաւատարմութեամբ պիտի ծա-  
ռայեն ձեղ :

ՏԵԱՄԻՐԵ , Ծուա ըրէ ուրեմն , Բամիլը , երթանք , ու ետքը  
տիկին Եվրէն քաւ հազարաներդ կը դրկէ :

ԲԱՄԱՐԱՄՄ ԵՄ ՃԵՂԻ ՀՅԱՂԱՆԴԵԼՈՒ . (աւաղ ինձ) .  
(ի՞ու լոյ) :

ՏԱՅՈՒԹԻՒ . Ի՞նչ ունիս , ի՞նչու կու լաս :

ԲԱՄԱՐԱՄ . Տիկին Եվրէ , շնորհակալ եմ քու ամեն աղջ .  
կութիւններէ գ որ մինչև ցայսօր ունեցար ինձի համար .  
Աստուած անոնց փռխարէնը քեզի հազարապատիկ հատուցանէ .  
ներէ ինձ , կ'աղաչեմ , եթէ երբ եմն զքեզ նեղացուցեր եմ .  
միշտ սիրէ զիս , կ'աղաչեմ , ու աղօթք ըրէ ինձի համար :

ԵՎՐԻՒ . Ա՛յ Աստուած , սիրաս կը կակծայ , չեմ կրնար  
դիմանալ :

ՏԱՅՈՒԹԻՒ . Բամէ լո , որբան աւելի մնաս հօս , այնքան աւելի  
պիտի նեղանաս , երթանք իւր տունս , ուր ուրախանալու  
շատ առիթներ պիտի ունենաս . ազգական մը ունիմ , որ չինդ  
տարի ճամբորդութիւն ընելէն ետքը եկաւ . ամենուն հետ  
դիւրութեամբ րնկերութիւն կ'ընէ , զուարթադէմ ու քաղա  
ցուակենցաղ մէկն է . զանազան ազդերէ ծառաներ քերեր է  
չեաը , և իր հօս գալէն 'ի վեր տունս Փարփղ մը դարձու :

ԲԱՄԱՐԱՄ . Կը յուսամ որ ձեր ասպետ ազգականը ինձի հետ  
չընտանենար :

ՏԱՅՈՒԹԻՒ . Եկու երթանք , ոչինչ տեղը ժամանակ չանցընենք .  
ԵՎՐԻՒ . Ձեր եղբօրր հետ Ճաշել չէք ուզեր :

ՏԱՅՈՒԹԻՒ . Ա՛յ , Բամէ լան տունս պիտի տանիմ :

ԲԱՄԱՐԱՄ . Աայէտի , ինչ պիտի ըսէ Աայլուրը եթէ ասանկ  
դեղօրէն ձեռքը չհամբուրած եթամբ :

ՏԱՅՈՒԹԻՒ . Եթէ կուզես , եկու հետս , իր սենեակէն կ'անց -  
նինք ու կը համբուրես ձեռքը :

ԵՎՐԻՒ . Ահա ինքը կու զայ :

ԲԱՄԱՐԱՄ . (Վայ ինձ , կը դողամ , արիւնս կը սառի երակ -  
ներուս մէջ :

ՏԵՍԱՐԱՆ

ՊՈՇՓԻԼ ԵՒ ՆԱՑՆՔ :

- ՊՈՇՓԻԼ . Մայլէտի , աս սենեկին մէ ջ ի՞նչ կ'ընէք :
- ՏԱԱՏՐԻ . Բամէլան առնելու եկայ :
- ՊՈՇՓԻԼ . Ի՞նչ կ'ուղէք բամէլաէն :
- ՏԱԱՏՐԻ . Հետո պիտի տանիմ :
- ՊՈՇՓԻԼ . Ո՞ւր :
- ՏԱԱՏՐԻ . Իմ տունս , բամէլան ինձի սենեկապետուհի չի չութիք :
- ՊՈՇՓԻԼ . Բամէլան իմ տունէս դուքս չելլէք :
- ՏԱԱՏՐԻ . Ի՞նչպէս , խօսքերնէդ կը դառնաք :
- ՊՈՇՓԻԼ . Քրոջս հետ խօսքս պահելու պարտաւորութիւն չունիմ :
- ՏԱԱՏՐԻ . Ասպետի մը ամուսնացեալ քրոջը ամեն կերպ յարդ ընծայել պէտք է :
- ՊՈՇՓԻԼ . Ի՞նչպէս կ'ուղէք և կը հաջիք , խօսեցէք . Բամէլան ասկէ չերթար :
- ՏԱԱՏՐԻ . Բամէլան հետո պիտի դայ :
- ՊՈՇՓԻԼ . (Բամէլային) . Քու սենեակդ դնա դուն :
- ԲԱՄԻԱ. Տէր իմ :
- ՊՈՇՓԻԼ . Սենեակդ դնա կ'ըսեմ . երդում կընեմ որ քըս նութեամբ տանել կու տամ հիմա :
- ՏԱԱՏՐԻ . Ո՛չ , Մայլրտ , շնորհք ըրէք . . . :
- ՊՈՇՓԻԼ . Եթէ խօհեմութեամբ չվարուիք՝ զղջալու էք :
- (Բամէլային) . սենեակդ դնա :
- ԲԱՄԻԱ. Տիկին Եվլէ ; օպնէ ինձ :
- ԵՎՐԻ . Տէր , արեւուդ համար :
- ՊՈՇՓԻԼ . Գնա դուն ալ անոր հետ :
- ԵՎՐԻ . Բամէլային հետ :
- ՊՈՇՓԻԼ . Այս , շուտով իր սենեակը դացէք :

ԵԱԾՐԻ . Բամելս , երթանք . բաւական է , ալ աւելի խօսիլ  
չտանք :

ԲԱՄՏԻՍ . (ԵՎՐԵՒՆ) . Եթէ հետո դաս , սիրով կ'երթամ :  
ՆՎՐԻ . Տեր իմ , հրամաննիդ կը կատարեմք :

ԲԱՄՏԻՍ . Կը հնաղանդիմ ձեր հրամանին : (Կը իսկաբնի  
այս ԵՎՐԵՒՆ հետ ունեակը կը մոռնէ) :

ՊՕՆՖԻԼ . (ԱՇ , Բամելս , խիստ դեղեցիկ ես դու) :

ՏԱՅԻՐԻ . Եղբայր , յիշեցէք անդ ամ մը ձեր դերդաստանին  
պատիւը :

ՊՕՆՖԻԼ . (Բամելսյին աւնելին կը ճօրենայ) :

ՏԱՅԻՐԻ . Ի՞նչ , Բամելսյին սենեակը կ'երթաք . կ'ուզէք որ  
աչքովս տեսնիմ ձեր ակարութիւնը . երկինք ; կ'երդնում  
որ . . . . :

ՊՕՆՖԻԼ . (Բամելսյին աւնելին դուռը գրաւելին կը գայիկ բանալին  
առ բանալին եր ծրայ կը դանէ) :

ՏԱՅԻՐԻ . Ասահովութեան մէջ դրէք ձեր դեղեցիկ սիրու-  
հին , որպէս զի ըլլայ թէ գողնան . Այլորս , խելքերնիդ  
դլունինիդ բերէք , եթէ ոչ , ձեր պատիւը ու պարկեցու-  
թիւնը վտանդի մէջ պիտի դնէք :

ՊՕՆՖԻԼ . (Քը զը իօսուերան ճուռականնեւն չընելով կ'երենայ) :

ՏԱՅԻՐԻ . Այսպէս կը թողուք զիս , այսպէս կը նախասէք  
զիս , զիտեմ ես վրէժինդիր ըլլալու միջոցը : Եթէ բարկու-  
թիւնը զինքը կը դրզուէ , միթէ զիս ալ չգրդուեր ալ աւելի :  
Որչափ և անօրդութեամբ վարուի հետո , եղբայրս ըլլալը չն  
կ'նար ուրանալ , ու երկուքնիս մէկ արիւնէ ծնած ենք : Բա-  
մէլան հետո պիտի զայ , եթէ ոչ . . . . պիտի սպաննեմ զան :

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱԲԱՆ ԱՊԱՀՈՒՅԻՆ

ՄԱՅԼԱՐՏ ՊՈՆՖԻԼ Յւրուլ բանալի յը բանած, երուլ հԱՄԱՅՆ

ՊՈՆՖԻԼ. Աղօրմի լի Բամելա, խեղչ Խվրէ, տակաւին բանան  
են. երթամ աղատեմ զանոնք. բայց ով Խստուած, ի՞նչ  
պիտի ընեմ Բամելան. Բամելան իմ հաղիս է, քաղցրիկ Բա-  
մելաս. երբ եմն կ'ըստիպեմ ինքզինքս որպէս զի անոր գեղե-  
ցիկ դէմքը երևակայութենէս հեռացընեմ, ու ինձի կը թուի  
թէ անորմէ զատուիլ հնարաւոր բան մ' է, բայց երբ վերս-  
տին կը տեսնեմ զան, իսկոյն արիւնիս սատիլը կ'ըզգամ ե-  
րակներուս մէջ, ու այնպէս կը թուի ինձ թէ միայն անորմէ-  
կախեալ է իմ կեանքս. բայց ի՞նչ պէտք է որ ընեմ, պլ-  
սակաւիմ. Բամելա, այս, արժանաւոր ես դուն, սակայն շատ  
բաներ պէտք է մտածեմ. Եկու զոնէ ան դուռը բանամ,  
անոնց սրտի ահօւդողէն ացատեմ. (ԷՇԵՐԱՅ Բանալու):

ԻՍԱՀԱԿ. Տէր իմ:

ՊՈՆՖԻԼ. Ի՞նչ կ'ուզես:

ԻՍԱՀԱԿ. Մայլորտ Արդուրը:

ՊՈՆՖԻԼ. Թող զայ, Ճամանակին կը հանի, իր հաւա-  
տարիմ բարեկամութեամբը ինձ անկեղծ խրատներ կընայ  
տալ. Փոքր ժամանակ մ' ալ թող համբերեն Բամելան ու  
Խվրէն իրենց երկիւզալի մտածմունքներուն մէջ. 'Ի հարկէ  
բան մը որոշելու եմ:

ՏԵՍԱԲԱՆ Բ.

ԱՐԴՈՒՐ ԵՒ ՊՈՆՖԻԼ

ԱՐԴՈՒՐ. Բարեկամ, շուտով վերադարձայ, ու իմ կրկին  
Ներկայութեամբս զուցէ ձեզ ձանձրութիւն տամ:

ՊՈՆՓԻՆ. Ես միշտ կը սիրեմ զձեզ, ու ձեր ընկերութեանը հիմա ալ աւելի կը ցանկամ, քան թէ՝ ուրիշ ժամանակ :

ԱՐԴԱՐ. Աւրեմն պիտի ներե՞ք որ ձեր հետը աղատօքէն խօսիմ :

ՊՈՆՓԻՆ. Այս, կ'ուզեմ որ անկեղծութեամբ ինձի հետ խօսիք :

ԱՐԴԱՐ. Այս առառւ ինձի հետ ունեցած ջերմ վիճակ քանութեանդ բռն պատճառը իմացայ :

ՊՈՆՓԻՆ. Սիրելի բարեկամ, ցաւակից չեք ինձ :

ԱՐԴԱՐ. Այս, ցաւակից եմ, ու կը մեղքընամ ձեզ :

ՊՈՆՓԻՆ. Այսպէս չէ, իմ կացութիւնու մեղքընալը արշանի չէ :

ԱՐԴԱՐ. Ցիրակի շատ մեղքընալու արժանի է, քան զի փոքր քան չէ որ արժանաւոր ու առաքինի մարդ մը իւր սիրոն ու կամքը զոհէ :

ՊՈՆՓԻՆ. Սիրոս շիտակը կը սեմ որ կորսնցուցեր եմ, բայց դուք կը զրապարտէք զիս թէ՝ առանց բանաւոր պատճառի մը ըրած եմ. Մայլորտ, հաւատացէք ինձ որ կը սխալիք :

ԱՐԴԱՐ. Չեր սիրոյն բանաւոր ըլլալը ջատագովելու համար ինչ ապացոյցներ ունիք :

ՊՈՆՓԻՆ. Բարեկամ, Բամելան տեսե՞ր էք դուք :

ԱՐԴԱՐ. Այս, տեսեր եմ, բայց ո՛չ ձեր աչքերովը :

ՊՈՆՓԻՆ. Անոր գեղեցիկ ու քաղցր դէմքը կրնաք ուրանալ :

ԱՐԴԱՐ. Բամելան զեղեցիկ, քաղցր ու անոյշ դէմք ունի, ես ալ քու հետդ եմ, բայց ասոնք ձեր կորսնցընելու հանգստութեանը ու խաղաղութեանը հետ բաղդատելով, աննշան բաներ են :

ՊՈՆՓԻՆ. Ո՛չ, Մայլորտ, Բամելան այնպիսի արժանիք մը ունի, որ ո՛չ ձեր աչքերը կը տեսնեն և ոչ իմ աչքերս :

ԱՐԴԱՐ. Ո՞րն է անոր չտեսնուած արժանիքը :

ՊՈՆՓԻՆ. Անոր անսովոր առաքինութիւնը, անստղիւտ հա-

մեստութիւնը ու զարմանալի պարկեցութիւնը :

ԱՐԴՈՒՅԻ. Այդ ձիբքերը մնծամնծ յարդանաց ու մնծարանաց արժանի են. սակայն թէ որ Բամէ լան պատմածնուրդ չափ պարկեցաւ է, չիվայելեր որ դուք ալ աւելի պարկեցաւ և համեստ ըլլաբ:

ՊՕՆՖԻ. Բայց աս առտու ազնուական մարդու մը անաղնուական ամսւսնութեամբ իր պարկեցաւթեանը և օրէնքին շնչասելուն վրայ բանակուլով յաղթեցի ձեղի:

ԱՐԴՈՒՅԻ. Սակայն ես ալ աւելցուցի թէ այնպիսի ամսւսնութեամբ իր զաւակները կը գաւաճանէ մարդ:

ՊՕՆՓԻ. Զաւակ ըլլալիքը յայտնի չէ:

ԱՐԴՈՒՅԻ. Կը ցանկայիք առանց զաւակ ունենալու մեռնիլ:

ՊՕՆՓԻ. (Կը մրածէ ժամանակ մը). Ո՛չ, յայտնի է որ չի մեռնիր այն մարդը, որուն պատկերը իր զաւակաց կ'անցնի:

ԱՐԴՈՒՅԻ. Աւքեմն իրաւամբ փափաքածնիդ կը յուսաք ՚ի դործ դնել:

ՊՕՆՓԻ. Ո՛չ, ինչ գեղեցիկ և ինչ սիրուն զաւակներ պիտի ծնին առաքինի Բամէ լայէն:

ԱՐԴՈՒՅԻ. Անազնուական մօր մը արիւնը զաւակները նուսատութեան կը հակամիան:

ՊՕՆՓԻ. Ոչ արիւնը, այլ մօրը իմաստութիւնը ու առաքինութիւնը զարմանալի կերպով կը ներկործեն զաւակաց:

ԱՐԴՈՒՅԻ. Ծխակը ըսէք, միտք ունիք Բամէ լային հետ պսակուելու:

ՊՕՆՓԻ. Փափաք ունիմ, Բամէ լան ալ արժանաւորութիւն ունի, բայց որոշած չեմ կատարելու:

ԱՐԴՈՒՅԻ. Ո՛չ, զոցեցէք վայրկեան մը ձեր ականջները ձեր սրտին փափաքանաց դէմ, որոնք զձեզ կը շողոքորթեն, ու բայէք զանանք Ճշմարիտ բարեկամի մը, որ զձեզ կը խրատէ, հանգարա հողւով վայրկեան մը մտածեցէք ձեր արժանաւորութիւնը վրայ: Պատուաւոր մարդու մը պարտքն է նախ իր անձնական արժանաւորութիւնը պատուել, ու ետքը սէրն ու

անոր կիրքերը և զկայութիւնը իր բանաւորութեանը չհաղանակ պեցնել . ձեր առջի ըստածներուն բոլորովին հաւանութիւն պիտի տամ ձեր կրից ողսքանքը նուազելու համար . համար բնցէք թէ այսպիսի ամուսնութիւն մը ձեր համեստութեանը և օրինաց դէմ ըլլայ , ու զաւկըները անազնուական ընէ . բայց մաիկ ըրէք անոր հետեանքները , որոնցմէ փախչիլը անհնար է . եթէ միաքերնիդ դնէք յիշեալ ամուսնութիւնը կատարելու , պէտք է որ ձեր ազգականներուն զանդատանաց համբերէք , որոնք ձեր արիւնին եզած անիրաւութեանը մասնակից պիտի համարեն զիրենք , և իրենց անձնական անպատուութեանը մշտնջենական պատճառ պիտի սեպեն զձեղ : Լօնտրայի մէջ ծաղը և ծանակ պիտի ըլլաք , երեելի ընկերութեանց մէջ ձեր անունը նախատանոք ու անարգութեամբ պիտի յիշուի . այս ամենուն կը համբերէ այն մարդը որ աշխարհս իր փափուկ սիրոյն համար կը զոհէ : Խոկ մաիկ ըրէք , Մայլըրտ , մտիկ ըրէք այն պարագաներն ալ , որոնք ձեր ազնիւ սիրտը պիտի չկրնայ տանիլ , ասոնք են ձեր ամսւսնոյն ըլլալու նախատինքները և արհամարհանքները , որով պիտի պարտաւորի իբրև ծառայ մէկ կողմ քաշուիլ : Աղնուական տիկինները անոր հետ ընկերութիւն ընելու պիտի չաջին , ու անազնուականներու հետ ալ տեսութիւն ընելը գուք արժան դատելու չէք . ուրեմն ինչ թշուառ կեանք անցընելու է ան դժբաղդ կինը . ծառաները զինքը իբրև իրենց տիրու հին պիտի չցարդեն . վասն զի ժամանակ մը իրենց ընկերակից և ծառայակից եր ան : Բրտացեալ ձեռքերով անոր հայրն ու դիւղացի ազգականները միշտ ձեր գովը պիտի տեսնէք , որոնց ներկայութիւնը զձեղ պիտի ամաչեցնէ : Այն սէրը , այն աստիկ սէրը , որ մարդը կը կուրացընէ և ամեն բան իրեն գեղեցիկ ու սիրուն կ'երեցընէ , շատ քիչ ժամանակ կը տեմ . վասն զի վառած յարդին բոցին նման ձեր սիրոյ բոցերն ալ շուտ պիտի մարին : Այն ատենը պիտի սկսիք մտածել ու ափսոսալ . բայց ինչ օգուտ , ժամանակը անցած պիտի ըլլայ ,

և ուրիշ օգուտ պիտի չտեսնէք, բայց եթէ ալ աւելի ցաւ-  
էերնիդ պիտի շատը նէք: Եթիւն ջամարիտ և հաւաարիմ բա-  
րեկամ, ձեզի հետ կը խօսիմ, նկատեցէք և տեսէք մէ կ կողմէ  
ձեր սիրոյն ձեզի խոստացած ժամանակաւոր ու կեղծեալ քաղ-  
ցրութիւնները, նկատեցէք և տեսէք միւս կողմէ և ալ ձեր պաշ-  
տաւորութիւնները, ձեր խոստամունքները, ձեր վտանգները  
և որոգայթները, որսնց մէջ պիտի իյնաք: Եթէ ձեր բանա-  
կանութիւնը ու գաասղութիւնը կորուսած չէք, ձեր նման-  
ներէն մէկը ընտրեցէք և ձեզի արժանի անձ մը նախապատիւ  
համարեցէք:

ՊՕՆԳԻԼ. (ԱՐԴՅՈՒԹԻՆ ՋԻՂԸ ԷՐ ՊԼՇԱ-  
ՄԲԻՌԻ. Սայլսրտ, ձեզի արժանի վսեմ զործ մը կատարե-  
լու համար շուտով որոշում մը ըրեք. հեռացէք այս մողու-  
թենէն ու արձգկուհցէք այս անարդ շղթաներէն:  
ՊՕՆԳԻԼ. Բայց ի՞նչորես, բարեկամ, ի՞նչորես ընեմ. թողում  
բամէ լան որ երթայ:

ԱՐԴՅՈՒ. Չեր քրոջը յանձնեցէք դան:

ՊՕՆԳԻԼ. Ա՛չ, այդ չըլար, անկարելի է թողում որ Բա-  
մէ լան Սայլէտիին հետ երթայ:

ԱՐԴՅՈՒ. Բայց ի՞նչ պատճառաւ:

ՊՕՆԳԻԼ. Այն պատճառաւ որ Սայլէտին քիչ մը խելազաք  
է, ու գաղանական բարկութիւն մը ունի. ամշնալով կ'ըսեմ  
իր պակասութիւններովը ինձ շատ կը նմանի. ողորմելի Բա-  
մէ լա, մօրս հետ աղէկ կը կենցաղարէր, բան զի մայրս իր  
աղջկան պէս կը սիրէր զան. Սայլէտիին քովը իր առողջու-  
թիւնը և կեանքը թշուառութեամբ պիտի կորսնցընէ:

ԱՐԴՅՈՒ. Աւելի մն բարեզործութիւն մը ըրեք, ամուսնա-  
ցուցէք զան:

ՊՕՆԳԻԼ. (Քիչ ճը ճոանելէլին երև ի՞լուէ) . Այս, զէշ ըսլար:

ԱՐԴՅՈՒ. Կ'ուղէք հողամ անոր այր մը զտնելու:

ՊՕՆԳԻԼ. Այս, հողացէք, շուտով զտէք:

ԱՐԴՅՈՒ. Ահծ սիրով պիտի ջանամ:

ՊՕՆՖԻ. Մայրս շատ պատուիրեց ինձ որ անոր չող տանիմ<sup>1</sup>  
ԱՐԴՈՒԹ. Արժանաւոր օժիտ մը տուեք անոր, որով ձեր  
մօրը պատուէրը կատարած կ'ըլլաք:

ՊՕՆՖԻ. Այս, երկու հաղար կնէ<sup>1</sup> օժիտ կու տամ,  
ԱՐԴՈՒԹ. Այդ խիստ շատ է, ով կ'ուզէք որ Բամէ լային  
Հետ պսակուի:

ՊՕՆՖԻ. Բամէ լան ռամիկ էրկան մը հետ չկրնար<sup>2</sup> ամսւս  
նանալ:

ԱՐԴՈՒԹ. Աղնուական մը օժակ համար չամսւսնանար:

ՊՕՆՖԻ. Չըլլայ որ օտարական մէ կը դանէք:

ԱՐԴՈՒԹ. Գժուաբնիդ պիտի դայ եթէ Բամէ լան ձեզմէ հե-  
ռու երթայ:

ՊՕՆՖԻ. Աէրքերս անդժութեամբ ալ աւելի մի ծան-  
րացընէք:

ԱՐԴՈՒԹ. Գոնէ տիկին Եվլրէին ըսենք, որ խոչեմ կին  
մ'է, ու Բամէ լային այր մը գանելու հոգ տանի:

ՊՕՆՖԻ. Այս, Եվլրէն գնամէ լան շատ կը սիրէ, ու անորմէ-  
դատ ուրիշ մէ կը զան գոհ ընել չգիտեր:

ԱՐԴՈՒԹ. Աչա զործը կարդի գրուեցաւ, և զրեթէ ա-  
պահովեցաւ այս աղօտորիկ աղջիան վիճակը, դուք ալ ձեր  
յաւիտենական կործանման վտանգներէն աղատ էք:

ՊՕՆՖԻ. Սիրելի բարեկամ, ձեր բարի խրատները մեծ  
աղդեցութեամբ սրտիս կը ներգործեն, բայց ես միայն կը  
մաշիմ, ու ես միայն կ'ըզդամ անձիս թշնամի եղող կիրքե-  
րուս անդութ ցաւերը:

ԱՐԴՈՒԹ. Որովհետեւ սէր ու համարաւմ ունիք իմ վրաս,  
կ'աղաչեմ շնորհք մ' ալ ընէք ինձ:

ՊՕՆՖԻ. Կենացս միջնորդն ու դատաւորը դուք էք:

ԱՐԴՈՒԹ. Կը փափաքէի որ բարեհաճէիք գալ հետ զիւղը  
ութ օր մնալ:

(1) Ուկի Անդղիական, որ 115 Տաճկական դաշեկան կ'արժէ:

ՊՕՆՖԻԼ. Կերեցէք, չեմ կրնար ձեր այս խնդիրը կատարելու:

ԱՐԴՈՒՏԻՐ. Ինչու համար արդեօք:

ՊՕՆՖԻԼ. Առան զի զործերս չեն ներեր ինձ որ Լօնարայէն հեռանամ:

ԱՐԴՈՒՏԻՐ. Արդեօք այս զործերուն Բամբլան ալ մասնակցութիւն ունի՞:

ՊՕՆՖԻԼ. Այս, բայց միոյն զինքը ամսւսնացընելու համար:

ԱՐԴՈՒՏԻՐ. Առանց ձեզի ալ կրնայ ըլլալ պյդ:

ՊՕՆՖԻԼ. Բայց առանց ինձի անոր վիճակը ինչպէս կրնայ որսչուիլ:

ԱՐԴՈՒՏԻՐ. Աւթը օրուան մէջ անանկ դիւրութեամբ հարանիք չըլլար դաշնագրութեան միջոցաւ:

ՊՕՆՖԻԼ. Թողուցէք զիս, կ'աղաջնի:

ԱՐԴՈՒՏԻՐ. Մայլորա, գուք կը խարէք զիս, տակաւին համոզուած չէք իմ խրատներուս, ես ասկէ երթալուս պէս՝ գուք նորէն պիտի սկսիք Բամբլան ստիպելու:

ՊՕՆՖԻԼ. Ասանկ չարաշար մի դատէք զիս, վասն զի ձեր խրատները կը պատուեմ, կը յարդեմ և կ'ընդունիմ:

ԱՐԴՈՒՏԻՐ. Եթէ այդպէս ըլլար, հետո դիւզը չզալու ամենին պատճառ չէիք զաներ:

ՊՕՆՖԻԼ. Աւթը օր չեմ կրնար տունս մինակ թողուլ:

ԱՐԴՈՒՏԻՐ. Միայն երեք օր մնաք, զոհ կ'ըլլամ:

ՊՕՆՖԻԼ. Երեք օր, ուր:

ԱՐԴՈՒՏԻՐ. Արդուրին դիւզի տունը:

ՊՕՆՖԻԼ. Բայց, ով Աստուած, ինչու կ'ուզէք զիս դիւզը տանիլ:

ԱՐԴՈՒՏԻՐ. Բորթուկալէն իր հայրենիքը վերադարձող ազգականուչիս ընդունելութիւն պիտի տամ, անոր համար կ'ուզեմ զձեղ դիւզը տանիլ:

ՊՕՆՖԻԼ. Իմ սեամաղճոտ բնութիւնս ձեր զուարճալի ընկերութեան դժոհոչութիւն պիտի սպատճառէ:

ԱՐԴՈՒՐ. Բաւական է որ ինձի հաջելի ըլլալ:

ՊՕՆՖԻԼ. ԶԵք ուղեր զիս հոս թաղուլ:

ԱՐԴՈՒՐ. Աչ, ստուդիւ կ'ըսեմ, թէե ձեր անդին բարեց կամութիւնը կորսնցընելու ըլլալ:

ՊՕՆՖԻԼ. Աւրեմմ շվայելեր որ ձեզ գեղջիօրէն պատասխան տամ, ձեղ հաջելի ըլլալու համար կու դամ:

ԱՐԴՈՒՐ. Հզաման ըրէք որ Ճաշը պատրաստեն, վասն զի կէսօրէն ժամ մը ետքը կառքս հոս պիտի բերեն, անմիջապէս միասեղ կ'երթանք:

ՊՕՆՖԻԼ. Աւաղ ինծի, ասանկ շուտ:

ԱՐԴՈՒՐ. Երկու ժամ ժամանակ ունիք:

ՊՕՆՖԻԼ. Շատ քիչ է:

ԱՐԴՈՒՐ. Ի՞նչ մեծ և կարեռը դործ ունիք, որ աւելի ժամանակ կը խնդրէք:

ՊՕՆՖԻԼ. Պէտք է որ հարկ եղած պատուէրները տամ տանս կարգադրութեանը համար:

ԱՐԴՈՒՐ. Զեր տունը խիստ կարգադրեալ է երեք օրուան համար, նոր կարգադրութեանց պատուէրներ տալու կարօտութիւն չունիք:

ՊՕՆՖԻԼ. Բարեկամ, ինչպէս որ կը տեսնեմ, զուցէ կը վախնաք որ չեմ կրնար համելայէն քածնուիլ:

ԱՐԴՈՒՐ. Այս, եթէ հետս զալ չուղեք, անշուշա պիտի կասկածիմ:

ՊՕՆՖԻԼ. Խիստ բարի, ձեր հետը պիտի դամ:

ԱՐԴՈՒՐ. Խօսք կու տաք ինձ:

ՊՕՆՖԻԼ. Այս, իբրև ասպետ կը խոստանամ ձեզ:

ԱՐԴՈՒՐ. Ներեցէք ինձ, քիչ մը պիտի երթամ, բայց անշապաղ կը վերադառնամ:

ՊՕՆՖԻԼ. Զէք ուղեր միասեղ Ճաշենք:

ԱՐԴՈՒՐ. Այս, բայց պարտիմ հրաման մը տալու, մինչեւ ժամ մը սպասեցէք ինձ:

ՊՕՆՖԻԼ. Ինչպէս որ կը կամիք, անանկ ըրէք:

ԵՐԵՎԱՆԻ . Բարեկամ՝, միաք բարեաւ : (Խեղչ Մայլըրտ, իւ  
ռոք այսպիսի հանդամանքներով ճշմարիտ ու մատերիմ բարե-  
կամի մը կարօտութիւն ունի իրեն օդնութեան հասնելու  
համար) :

(Եւ մէկնէ) :

ՊՕՆՖԻԼ . Տղա , Հո՛ս եկու :

### ՏԵՍԱԲԱՆ Գ.

ԻՍԱՀԱԿ , ՊՕՆՖԻԼ , ու Եպիկ ԼՕՆԿՄԱՆ .

ԻՍԱՀԱԿ . Հրամայեցէք, տէր իմ :

ՊՕՆՖԻԼ . Տան վերակացուն կանչէ : (Խառնուկ իւ մէկնէ) : Մայ-  
լըրտ Արգուրը հիւանդութիւնս կը ճանչնայ ու բժշկութեանս  
գեղը զիտէ . բայց ես այնպիսի հիւանդ մ' եմ , որ առող-  
ջանալու համար ինքզինքը բժշկին իմաստութեանը յանձնել  
չուզեր : Խօսք տուի Մայլըրտ Արգուրին որ հետը երթամ .  
բայց բամելան , բամելան պիտի կարդուի . այո՛ , այո՛ , պիտի  
կարդուի ու սրտիս կսկիծը պիտի աւելցընէ :

ԼՕՆԿՄԱՆ . Տէ՛ր իմ , ձեր հրամանին կ'ըսպասեմ :

ՊՕՆՖԻԼ . Լինքօնի կոմսութեան զիւղը երթալու համար  
տուած հրամաններս թող ետ մնան :

ԼՕՆԿՄԱՆ . Շատ աղէկ :

ՊՕՆՖԻԼ . Ճաշէն ետքը ինծի համար Ճամբը որդութեան հա-  
զուստ մը պատրաստել տուր :

ԼՕՆԿՄԱՆ . Այսօր պիտի մեկնիք , տէ՛ր իմ :

ՊՕՆՖԻԼ . Այո՛ :

ԼՕՆԿՄԱՆ . Ուրեմն պիտի երթաք :

ՊՕՆՖԻԼ . Այո՛ , այո՛ , ըսի քեզի :

ԼՕՆԿՄԱՆ . Լինքօնի կոմսութեան զիւղը երթալու համար  
պէտք եղածները պատրաստելու եմ :

ՊՕՆՖԻԼ . Խո՞ւլ ես գուն , ըսի քեզի թէ՛ երթալու չեմ :

ԼՕՆԿՄԱՆ . Հապա կ'ըսէք թէ պիտի երթաք :

ՊՕՆՖԻԼ . (Բարիստիւածք) . Պիտի երթամ , այո՛ , պիտի եր-  
թամ , բայց Լինքօնի կոմսութեան զիւղը պիտի չերթամ :

- 1.0ՆԿՄԱՆ . (ԶԵմ կրնար հասկընալ) :
- ՊՕՆՓԻԼ . Ի՞նչ ըստ քոյրս ասկէ մեկնելու ժամանակը :
- 1.0ՆԿՄԱՆ . Անշուշտ բամելան կ'ուզէ :
- ՊՕՆՓԻԼ . Երկնքի և երկրի վրայ կ'երդնում որ բամելան անոր հետ պիտի չերթայ :
- 1.0ՆԿՄԱՆ . Հո՞ս պիտի մնայ բամելան :
- ՊՕՆՓԻԼ . Այո՛ , պիտի կարդեմ դան :
- 1.0ՆԿՄԱՆ . ՏԵ՛ր իմ , պիտի կարդէ՞ք ըսեր :
- ՊՕՆՓԻԼ . Այո՛ , անոր վեճակը հաստատել կ'ուզեմ :
- 1.0ՆԿՄԱՆ . Ներեցէք ինձ , բայց ամուսինը դատիք :
- ՊՕՆՓԻԼ . Ո՛չ , տակաւին չդատանք :
- 1.0ՆԿՄԱՆ . (Երանի թէ ես ըլլայի այն բաղդաւորը) :
- ՊՕՆՓԻԼ . Բամելային արժանաւոր մէկը կը ճանչնան :
- 1.0ՆԿՄԱՆ . Կարելի է ճանչնամ , բայց . . . :
- ՊՕՆՓԻԼ . Ի՞նչ ըսել կ'ուզես բայց ըսելով :
- 1.0ՆԿՄԱՆ . Ներումն կը խնդրեմ , ստուզիւ , ստուզիւ պիտի կարդէք բամելան :
- ՊՕՆՓԻԼ . Ես ոչինչ տեղը բան չեմ խօսիր :
- 1.0ՆԿՄԱՆ . Բամելան իմ դտած մարդես զոհ կ'ըլլայ :
- ՊՕՆՓԻԼ . Բամելան խելացի աղջիկ մ' է :
- 1.0ՆԿՄԱՆ . Եթէ խելացի է , ուրեմն տարիքը առած մարդը չարշամարհեր :
- ՊՕՆՓԻԼ . Բամելային հետ կարդուիլ կ'ուզես :
- 1.0ՆԿՄԱՆ . Այո՛ , կ'ուզեմ , գուք իմ ով ըլլալս դիտեք :
- ՊՕՆՓԻԼ . (Ո՛չ , չարաճնի , ուրեմն իմ նախանձորդս է աս) :
- 1.0ՆԿՄԱՆ . Ի՞նչ որ ունիմ՝ բամելային կը նուիրեմ :
- ՊՕՆՓԻԼ . (Այո՛ , այո՛ , այս ամուսնութեամբ բամելան աչքիս առջեկն չեռանար) :
- 1.0ՆԿՄԱՆ . ՏԵ՛ր իմ , այո՛ , ստանց ամշնալու կը խոստովանիմ որ բամելան կը սիրեմ , և հիմա որ կը տեսնեմ թէ անոր վեճակը պիտի հաստատէք , կ'աղաւեմ , Վայլորտ , տէր իմ , միսիթարեցէք դիս :

ՊՕՆՖԻԼ. (Վ'նչպէս, միթէ պիտի կարենամը համբերելու որ իմ ծառաս վայելէ ան զեղեցկութիւնը, որ զիս կը մաշէ, ոչ, այս ըլլալու բան չէ) :

ԱՕՆԿՄԸՆ. Տէր իմ, ի՞նչ կ'ըսէք :

ՊՕՆՖԻԼ. (Բարինութեամբ). Այն կ'ըսէմ որ դուն ցնորեր ես, և եթէ մէկ մ' ալ համարձակիս բամէ լային երեսը նաշելու, կ'ըսպաննեմ զքեզ :

ԱՕՆԿՄԸՆ. Առանց պատուինանելու խոհաբնութեան ճը կ'ընէ Սայշերին ու կը մէջէ :

ՊՕՆՖԻԼ. Ո՛չ, ո՛չ, անհար է ինձ տեսնել որ ես չմեռած բամէ լան ուրիշը առնէ : Բայց բարեկամիս խօսք տուած եմ, ի՞նչ ընեմ արգեօք, խօսքս ետ առնեմ, և միթէ ամեն մէկ վայրկեան միաբս պիտի փոխեմ այսպէս . ո՛չ, թող ըլլայ, պէտք է որ բանականութեան հնազանդիմ, թող փառաւորուի զոռողութիւնը, թող զոհուի սիրտս, և թող տիշին Եվրէն բամէ լային ամուսինը դտնէ : Այս, ես Լօնտրա չդարձած բամէ լան պէտք է կարգուած ըլլայ, ան տեսնը արգեօք պիտի կարենամը ապրիլ, ո՛չ, ո՛չ, անշուշտ պիտի մեռնիմ, ու իմ կեանքս անդութ մտատանջութեան և Ճշմարիտ պատուասիրութեան զոհ պիտի ըլլայ : Թող անդամ մ' ալ բամէ լան տեսնեմ, որ վերջին տեսնելս պիտի ըլլայ : (Ա'երժայ դաստիար իւ բանաց բանալին ու Եվրէն դրութ կ'ելլէ) :

### ՏԵՍԱԲԱՆ Դ,

ԵՎՐԻ ԵՒ ՊՕՆՖԻԼ.

ԵՎՐԻ. Տէր իմ, կ'երեի թէ զիս աղատելու ժամանակը հասած է :

ՊՕՆՖԻԼ. Ո՞ւր է բամէ լան :

ԵՎՐԻ. Գիմացի սենեակին է, ուր կու լայ, կ'ողբայ, ու կը դողբայ :

ՊՕՆՖԻԼ. Կը դողբայ, ըստց ի՞նչ բանէ կը վախնալ :



ԵՎՐԻԿ. ԶԵՂԱԾ կը վախնայ , որ սադայելէն աւ չարագոյն  
քղեր էք :  
ՊՕՆՖԻԼ. Ես ի՞նչ գէշութիւն ըրի իրեն :  
ԵՎՐԻԿ. Դուք ի՞նքզի՞նքնիդ մասցեր էք :  
ՊՕՆՖԻԼ. Ի՞նչ ըսել կ'ուզես :  
ԵՎՐԻԿ. Բարկացած ժամանակնիդ աշխարհը կը վախցընէք :  
ՊՕՆՖԻԼ. Բարկութիւնս սիրոյս զաւակն է :  
ԵՎՐԻԿ. Անիծեալ սէր :  
ՊՕՆՖԻԼ. Ըսէ Բամէլային որ հսս զայ :  
ԵՎՐԻԿ. Ի՞նչ կ'ուզէք այն սղորմնի աղջիկեն :  
ՊՕՆՖԻԼ. Ոլիտի խօսիմ հետը :  
ԵՎՐԻԿ. Ռորիշ բան չէք ուզեր անորմն :  
ՊՕՆՖԻԼ. Ոչ , ուրիշ բան չեմ ուզեր :  
ԵՎՐԻԿ. Կրնամի հաւատալու :  
ՊՕՆՖԻԼ. Բամէլային համեստութիւնը ամեն յարդութեան  
արժանի է :

ԵՎՐԻԿ. Օրհնեալ ըլլաք ուրեմն . հիմա կը բերեմ Բամէլ-  
ան : (Քիւ ճը հեռանայ , ու նորեն կը վերտպառնայ) . Բայց  
ըլլայ թէ Բամէլային զեղցիութիւնը ձեզ մասցունէ անոր  
համեստութեան յարդը :

ՊՕՆՖԻԼ. Եվրէ , ոչինչ տեղը մի հոգնեցըներ զիս . կամ  
Բամէլան թող հսս զայ , և կամ ես հոն կ'երթամ :  
ԵՎՐԻԿ. Ո՛չ , ո՛չ , հսս կը բերեմ : (Ա'ԵՐԵՄՅ Բամէլան թէ-  
քէլսու) :

ՊՕՆՖԻԼ. Ահա սոսկալի վայրկեանս հասաւ , պէտք է այս  
կէտիս 'ի դործ դնել այն մեծ առաքինութիւնը , որով մարդ  
ի՞նքզի՞նքին կը յաղթէ :

### ՏԵՍԱԲԱՆ Ե .

ԵՎՐԻԿ. Բամէլային յետէն բուհած կը բերէ , որ գլուխը իսկարհէ-  
յուցած կու բայ դողլուլ , և ՊՕՆՖԻԼ .

ԵՎՐԻԿ. (Առաջ ճը Բամէլային) . Մի կասկածիր , խոստացաւ  
ինձ որ քեզի տհաճութիւն տալու բան մը ընելու չէ :

ԲԱՄԵԼԱ. (Կամաց ճը Ելլեկին). Երդում ըրան :

ՊՕՆՓԻԼ. Կը ժողովե :

ԵՎՐԻ. (Այս, երդում ըրաւ) :

ԲԱՄԵԼԱ. (Ա՛՛, երբ երդում ընեւ, չխարեր) :

ԵՎՐԻ. (Արյալութին). Տէր իմ :

ՊՕՆՓԻԼ. (Կը դարձնոյ). Բամէլա :

ԲԱՄԵԼԱ. Աշտելը իոնորհեցուցած ողողութան չորաբ :

ՊՕՆՓԻԼ. Բամէլա, կ'ատե՞ս զիս :

ԲԱՄԵԼԱ. Ո՛չ, տէր իմ, ես մէկը չեմ ատեր :

ՊՕՆՓԻԼ. Դուն մեռնիլս կ'ուզէիր տեսնել :

ԲԱՄԵԼԱ. Բոլոր արիւնս կը թափեմ ձեր կենացը համար :

ՊՕՆՓԻԼ. Բամէլա, կը սիրես զիս :

ԲԱՄԵԼԱ. Կը սիրեմ զձեզ ինչպես աղախին մը սպարտաւոր է սիրել իր տէրը :

ԵՎՐԻ. (Պօնֆիլին). Ողորմիլին բարեսիրտ է :

ՊՕՆՓԻԼ. Այս, Բամէլա, գուն Ճշմարիտ բարեկը թութիւն ներսի զարդացեալ երիտասարդուհի մ' ես, լաւ կը Ճանշնամքու համեստութիւնդ, և քու առաքինութիւններդ կը զարմացընեն զիս. արժանի ես որ քու այդ բարիքներուդ փոխարենը հատուցանեմ քեզ :

ԲԱՄԵԼԱ. Տէր, ես քնաւ արժանաւորութիւն մը չունիմ:

ՊՕՆՓԻԼ. Քու գեղեցկութիւնդ երկնից մէկ պարզե մ'է, որ բարեբազդ մահկանացու մը երջանիկ ընես : (Կը ժողովե) :

ԲԱՄԵԼԱ. (Ելլեկին). Այս խօսքերուն զօրութիւնը ես լաւ չհասկըցայ :

ԵՎՐԻ. (Կամաց ճը Բամէլային). Թշուառական տէրս իր յոյւերսվը կը շողոքորթէ :

ՊՕՆՓԻԼ. Բամէլա, բացը ըսեւ, մարդոց ընկերութիւնը չեմ սիրեր :

ԲԱՄԵԼԱ. Բոլոր իմ ընկերներս կը սիրեմ :

ՊՕՆՓԻԼ. Փափաք ունիս ամուսնանալու :

ԲԱՄԵԼԱ. Ատածեմ անդամի մը :

ՊՕՆՔԻՆ. (Ո՛՛Հ, ի՞նչ բարեթաղդ է այն մարդը, որ այսպիսէ  
դեղեցիկ կին մը կ'ունենալ)։ (Աը ճրածէ)։

ԲԱՄԵԼԱ. (Առաջ ճը Եվրեան)։ Տիկին, որու համար կը խօսի  
Աայլըրու։

ԵՎՐԵ. (Առաջ ճը Բառելայէն)։ Ո՛վ զիտէ իրեն համար չե  
խօսիլու։

ԲԱՄԵԼԱ. (Ո՛՛Հ, թող չյուսամ)։

ՊՕՆՔԻՆ. Կին չունեցող Աայլըրուի մը քով սենեկասկետուհի  
մեալով ապահով չես գուն։

ԲԱՄԵԼԱ. Խիստ ձշմարիտ է ըսածնիդ։

ՊՕՆՔԻՆ. Քյոյրս քոնութեամբ կ'ուզէ զքեղ համար տանիլ,  
բայց ես չեմ ուզեր բնաւ որ անոր հետաւ երթաս։

ԲԱՄԵԼԱ. Պատրաստ եմ միշտ ձեր կամքը կատարելու։

ՊՕՆՔԻՆ. Ո՛՛Հ, քաղցրիլ Բամիլաս, ծառայելու համար ծնած  
չես գուն, իմ թանկապին Բամիլաս։ (Աը ճրածէ)։

ԲԱՄԵԼԱ. (Եվրեան)։ Աը լսես, աիկին Եվրե։

ԵՎՐԵ. (Բամիլայէն)։ Ես շատ յոյս ունիմ քեզի համար։

ԲԱՄԵԼԱ. (Ո՛՛Հ, արժանի չեմ ասանի մեծ բարեբարու-  
թեան մը)։

ՊՕՆՔԻՆ. Աիտքս դրի որ զքեղ կարդեմ։

ԲԱՄԵԼԱ. Ես աղքատ աղջիկ մ' եմ, ու արժանի չեմ կար-  
դուելու։

ՊՕՆՔԻՆ. Աայրս քեզի համար շատ պատուէ բներ տուաւ ինձ։

ԲԱՄԵԼԱ. Աստուած ողորմի իմ ամենասիրելի բարեպաշտ  
տիրուհւոյս հոգւոյն։

ՊՕՆՔԻՆ. Այս, Բամիլաս, շատ կ'ուզեմ որ զքեղ կարդեմ  
ու տուն տեղ ընեմ։

ԲԱՄԵԼԱ. Ո՛վ երկինք, ի՞նչպէս։

ՊՕՆՔԻՆ. (Ինձ այնպէս կու զայ որ հողիս սրտէս կը բաժ-  
նուի)։ (Աը ճրածէ)։

ԲԱՄԵԼԱ. (Աայաց ճը Եվրեան)։ Տիկին Եվրե, ի՞նչ պիսի ըլ-  
լամ ես արդեօք. ի՞նչ է իմ հակատաղիրս։

ԵՎՐԻ. (Կամաց ճը Բամելսյէն). Ես կը յուսամ որ իմ տիզ  
բռչիս պիտի ըլլաս:

ԲԱՄԵԼ. (Ո՛՛, մի տանջեր զիս այդպիսի խօսքերով):

ՊՕՆՖԻ. Ըսէ ինձ, Բամելա, կ'ուղէս կարգուիլ:

ԲԱՄԵԼ. Տէր:

ՊՕՆՓԻ. Պատասխան տուր համարձակութեամբ:

ԲԱՄԵԼ. Ես ձեր աղախինն եմ, ինչպէս կ'ուղէք այն  
պէս ըրէք:

ՊՕՆՓԻ. Ո՛՛, անգութ, կ'երևի որ ինձմէ բաժնուիլը  
իր դժուարը դալու չէ: (Աը ճրածէ):

ԲԱՄԵԼ. (Կամաց ճը Եփէնին). Կը աեսնես ինչպէս բար-  
կացած է:

ԵՎՐԻ. (Կամաց ճը Բամելսյէն). Իրաւունք ունի, մեծ համ-  
րերութիւն կ'ընէ:

ՊՕՆՓԻ. (Բարիսովեամբ) Կարդ ուէ, ապէրախտ . հեռացիր  
աչքիս առջնէն:

ԲԱՄԵԼ. (Ո՛՛, վայ ինձ, ինչ ըսիր որ այսպէս բար-  
կացաւ):

ԵՎՐԻ. (Չեմ կընար հասկընալ):

ՊՕՆՓԻ. Ըսէ ինձ, ամուսինդ պատրաստ է:

ԲԱՄԵԼ. Եթէ այսպիսի բան իմ միտքէս անցաւ երկնից  
կայծակը դլուխս իջնէ:

ԵՎՐԻ. Բամելան միշտ քովս էր, սուտ չխօսիր:

ՊՕՆՓԻ. Այսպէս դիւրութեամիլ կ'ընդունիս կարգուելու  
համար քեզի ըրած առաջարկութիւնս:

ԲԱՄԵԼ. Դուք իմ տէրս էք և դուք դիտէք ըսի:

ՊՕՆՓԻ. Զքեզ ուրիշի տալու համար քու տէրդ եմ, ու  
զքեզ ինձի առնելու համար քու տէրդ չեմ կընար ըլլալ:

ԲԱՄԵԼ. Տէրս էք ինձի հրամայելու, բայց պատւոյս ալ  
տէրը չէք:

ՊՕՆՓԻ. (Ո՛՛, այս խօսքերով ալ աւելի կը սիրեմ զինքը):  
(Աը ճրածէ):

ԲԱՄԵԼԱ. (Կամաց ճը Եվրէնն) . Ի՞նչ կըսես , տիկին Եվրէ քիչ գեղեցիկ յոյսեր :

ԵՎՐԻ . (Կամաց ճը Բամբլայնն) . Խելքս դլուխս չե :

ՊՕՆՖԻԼ . Թող այնպէս ըլլայ . քու պատիւդ ապահովութեան մէջ դնելու համար կը պարտաւորիմ զքեղ կարդ ել եվրէ , դուն որ Բամբլան կը սիրես , անոր ամուսին մը դտիք ԵՎՐԻ . Բամբլային օժիաը պիտի տաք :

ՊՕՆՖԻԼ . Այո , երկու հազար կիու պիտի տամ :

ԵՎՐԻ . (Կամաց ճը Բամբլայնն) . Հոդ մի ըներ , այսքան օժիտով երջանիկ պիտի ըլլաս :

ԲԱՄԵԼԱ. Տէր իմ , արենուդ համար ըլլայ , կ'աղաչեմ , զձեղ մի զոհէք ինծի համար :

ՊՕՆՖԻԼ . Ի՞նչ , սրտիդ մէջը պատրաստած մը ունիս :

ԲԱՄԵԼԱ. Թէ որ համարձակութիւն կու տաք ինձ ուղածս ընելու , անատեն սրտիս բաղձանքները ձեզի կ'ըսեմ :

ՊՕՆՖԻԼ . Խօսէ , ես բռնաւոր չեմ :

ԲԱՄԵԼԱ. Չատ կը փափաքիմ որ աղատութեան մէջ ապրիմ :

ՊՕՆՖԻԼ . (Քաղցրութեամբ) . Սիրելի Բամբլա , կ'ուզե՞ս ինծի շետ մնալ :

ԲԱՄԵԼԱ. Այդ ոչ ձեր աղնուութեանը և ոչ ինծի կը վլայելէ :

ՊՕՆՖԻԼ . Բայց ըսէ ինծի միթէ ինձմէ բաժնուիլդ գժուար չդա՞ր քեղ :

ԵՎՐԻ . (Բարեկամին սկրտը քանի կ'երթայ կը վառուի) :

ԲԱՄԵԼԱ. Երբէք գժուարս չզար պարտաւորութիւնս կատարելու :

ՊՕՆՖԻԼ . (Հրաշք մ'է որ ես չեմ մեռնիր) :

ԲԱՄԵԼԱ. Տէր իմ , կ'ուզելք զիս բարերազդ ընել , իմ պատիւս ապահովուցէք և այնպէս տնօրինեցէք որ միշտ զձեղ օրշնող ըլլամ :

ՊՕՆՖԻԼ . Ի՞նչ կ'ուզես ընեմ քեղ , որ ըստ ամենայնի դոհ ըլլաս :

ՔԱՄՔԵԼԸ. Զիս ծնողացս քովզ ղըկեցէք :

ՊՈՆԳԻԼ. Անտառներուն մէջ պիտի ապրիլս :

ՔԱՄՔԵԼԸ. Հոն հանդիստ պիտի ապրիլ, և պատուովս պիտի  
մեռնիմ:

ՊՈՆԳԻԼ. Աը մոռնել :

ԵՎՐԻ. (Կամաց ճը բառնելոյն). Ա'աղաչեմ, մի ըներ այդ ո~  
րոշումը ու մինակ մի թողուր դիս, Աստուծոյ սիրոյն:

ՔԱՄՔԵԼԸ. Թո՛ղ որ երթամ, տիկին, վասն զի կը տեսնեմ  
որ քիչ ժամանակ ունիմ ապրելու:

ՊՈՆԳԻԼ. Բամելլա:

ՔԱՄՔԵԼԸ. Տէր իմ:

ՊՈՆԳԻԼ. Արովչետե այդպէս գոհչ պիտի ըլլաս, դնակ ուշ  
ըեմ ծնողացդ հետը շնորհակալութեամբ ապրելու:

ՔԱՄՔԵԼԸ. (Աւրախութեամբ). Ո՛չ, ձեր ինձի ըրած այդ բա~  
րերարութեան փոխարէնը Աստուծ հասուցանէ ձեղ:

ԵՎՐԻ. Ա'աղաչեմ, տէր իմ, մի զօհէք այս ողորմիլի աղ~  
ջիկը, վասն զի չդ իտեր ինչ ուզելը, ու դուք ալ պէտք չէք  
իր կամքը կատարել:

ՊՈՆԳԻԼ. Լոէ, շես զ իտեր ինչ կ'ըսես. կանայք շատ ան~  
գամ զիրար սիրելով աւելի չարութիւն կ'ընեն քան թէ բա~  
րութիւն: Բամելլան իր պատիւը պահելու, ու իւր հանդստու~  
թեանը համար բարձր որոշում մը կ'ընէ:

ԵՎՐԻ. Ապերջանիկ Բամելլա:

ՊՈՆԳԻԼ. Ամուսնութեանդ օժտին համար սահմանած եր~  
կու հաղար ոսկիս հօրդ պիտի տամ:

ՔԱՄՔԵԼԸ. Ո՛չ, որչափ պիտի ուրախանամ հայրս տեսնելով:

ՊՈՆԳԻԼ. (Ցառելով). Ա.աղը, այս, վաղը պիտի մեկնիս  
ասկէ:

ԵՎՐԻ. Այսպէս շուտով:

ՊՈՆԳԻԼ. Այս, վաղը, վաղը երթալու է, դուն չես խառ~  
նուիր:

ԵՎՐԻ. Բայց ինչպէս պիտի երթայ, և որո՞ւ չետ:

ՊՕՆՓԻԼ. Դուռն ալ ընկերացիք հետը՝  
ԵՎՐԻ. Ե՞ս :

ՊՕՆՓԻԼ. Այսի , դուռն ալ փոքրիկ կառքով :

ՊՕՆՓԻԼ. Մի պատասխաներ ինձ . զլուխս կը դառնայ՝  
ԵՎՐԻ. (Ձէուոտէ) . Ո՛չ , ինչպէս շուտով զլուխը կը դառնայ :  
ԲԱՄԵԼԱ. (Ձէուոտէ) . Ողորմելի ծնողքս իրենց ուրախութենէն  
պիտի թոշին :

ՊՕՆՓԻԼ. (Եվբէէն) . Ես այսօր պիտի մեկնիմ , ինձի երեք  
օրուան համար զգեսաներ պատրաստե :

ԵՎՐԻ. Այսօր պիտի մեկնիք :

ՊՕՆՓԻԼ. Այսի , ըսի քեզի :

ԵՎՐԻ. Խիստ բարի :

ԲԱՄԵԼԱ. Այսօր դուք պիտի մեկնիք , ու ես վազը պատիւ  
պիտի չունենամ զձեզ նորեն տեսնելու :

ՊՕՆՓԻԼ. Ապերախտ , կ'ուրախանան ասոր համար :

ԲԱՄԵԼԱ. Ներեցէք որ ձեռքերնիդ համբուրեմ :

ՊՕՆՓԻԼ. Աչա վերջին անդամին համար :

ԲԱՄԵԼԱ. Ինձի ըրած ամեն բարիքներնուուդ փոխարէնը Առա  
տուած հատուցանէ ձեզ , ներումն կը խնդրեմ ձեզմէ եթէ  
երբէք ձեզի ծանրութիւն տուի ու տհաճութիւն սրատճառեցի .  
Կաղաչեմ որ միտքերնիդ բերէք երբեմն ձեր հաւատարիմ ա-  
զախինը : (Աը համբուրել Սայլորդին յետուը լուսի ու կը նրան եր-  
աբցանենէլուիլը ) :

ՊՕՆՓԻԼ. (Բարիքայտն իը յետանայ , եղուը ի ըշտայ որ յեւուը նըր-  
ջուածն է) . Ո՛չ , Բամելա , արցունքներովդ ձեռքս թրջեցիք :

ԲԱՄԵԼԱ. Ներումն կը խնդրեմ ձեզմէ , չուզելովս ար-  
ցունքներս կաթեր են ձեռացդ վրայ :

ՊՕՆՓԻԼ. Սրբէ ձեռքս . (Յեւուը իսու որայ) :

ԲԱՄԵԼԱ. Տե՛ր իմ , . . . :

ՊՕՆՓԻԼ. Ծուտով սրբէ ձեռքս :

ԲԱՄԵԼԱ. Գործնացնվը Ասյլորդին յեւուը իը որբէ :

ՊՕՆՖԻԼ. Ա՛Հ , աղերախտ :

ԲԱՄԵԼԱ. Ինչո՞ւ այս անունը կու տաք ինձի , տէր իմ :

ՊՕՆՖԻԼ. Գուն խոստովանեցար որ ես քեզի աղեկութիւնը բրի :

ԲԱՄԵԼԱ. Չեր տանը մէջ շատ բարիքներ ստացայ :

ՊՕՆՖԻԼ. Ի՞նչպէս սիրո ունիս ի՞նձմէ բաժնուելու :

ԲԱՄԵԼԱ. Չեր աղնուութիւնը կը հրամայե և կը զրկէ զիս :

ՊՕՆՖԻԼ. Կ'ուզես հոս մաս :

ԲԱՄԵԼԱ. Ա՛Հ , ո՛չ , հրաման տուէք ինձի որ երթամ :

ՊՕՆՖԻԼ. Աը տեսնես , ինչպէս անգութ և անօղորմ եւ գուն . գուն ես որ երթալ կ'ուզես , ու ես չեմ զքեզ զրկողը աւ ճամբողը :

ԵՎՐԻ. Ա՛Հ , ի՞նչ զուարձալի խենդեր են ասոնք :

(Բառհանկակ էլլու հոդին) :

### ՏԵՍԱԲԱԿ Զ.

ԿՈՅՆՔ ԵՒ ԻՍԱՀԱԿ :

ԻՍԱՀԱԿ. Տէր իմ :

ՊՕՆՖԻԼ. Անիծեալ , ի՞նչ կ'ուզես :

ԻՍԱՀԱԿ. Մայլորտ Արդուրը եկաւ :

ՊՕՆՖԻԼ. Գհան ասկէ . . . , ո՛չ , կեցիր . (Էլ ճառշէ + էլ ճը) .  
լըէ թող դայ : (Բառհանկ էլլու մենին) :

ԵՎՐԻ. Մենք է՛եր Սանք , տէր իմ :

ՊՕՆՖԻԼ. Բարի , զայէք :

ԵՎՐԻ. Բամէլա , երթանք :

ԲԱՄԵԼԱ. Խոնարհութիւնն էլլու և էրթան է՛սունք :

ՊՕՆՖԻԼ. Բան մը չխօսեցած պիտի երթաս :

ԲԱՄԵԼԱ. Չեմ գիտեր ի՞նչ ըսեմ . օրհնեալ ըլլաք :

ՊՕՆՖԻԼ. Զիս տեսնելու չես մէկ մ'ալ :

ԲԱՄԵԼԱ. Ճամբերութիւն :

ՊՕՆՖԻԼ. Չեռքս չես համբուրեր :

ՔԱՄՔԵԼԱ. Զեռքերնիդ արցունքներով թրջեցի:

ՊՕՆՓԻԼ. ԱՀԱ ՄԱՅԼՐԹ Արդուրը:

ՔԱՄՔԵԼԱ. ՏԵՇ իմ:

ՊՕՆՓԻԼ. Գնա:

ՔԱՄՔԵԼԱ. Աղորմելի, դժբաղդ Բամելլա:

ՊՕՆՓԻԼ. Յօժարութեամբ այս վայկենիս մեանիլս կ'ուզէի:

### ՏԵՍԱԲԱՆԻ Է.

ԱՐԴՈՒՐ ԵԽ ՊՕՆՓԻԼ.

ԱՐԴՈՒՐ. Բարեկամ, աշաւասիկ եկայ:

ՊՕՆՓԻԼ. (Կը հանչ). Տղա, հաս եկու:

ԱՐԴՈՒՐ. (Եկանչ): Մայլըրը խռովեալ է, կ'երեի թէ  
իր որոշումն ընելու կ'երկմտի:

ԻՍԱՀԱԿ. (Իը ճանէ). Ք՞նչ կը հրամայէք, տէր իմ:

ՊՕՆՓԻԼ. Սեղանը պատրաստեցէք:

(Եսահակ երլաւ կ'ուզէ):

ԱՐԴՈՒՐ. (Իսահակին), կեցիր: — Սիրելի բարեկամ. ձեր  
խստացածը կատարեցէք. ազգականուհիս զիւղս երթալով  
սուրհանդակ մը զրկեր է ըսելով որ առանց ինծի Ճաշ ը-  
նելու չէ. ուստի խօսք տուած եմ՝ շուտով պիտի երթամ և  
կը յուսամ որ մինակ չէք թողուր զիս:

ՊՕՆՓԻԼ. Ճաշ ընելու համար այս ժամն Լոնտրայէն ել-  
լելու և զիւղը երթալու յարմար ժամանակ չերեիր ինձ:

(Եսահակ կը մէնի):

ԱՐԴՈՒՐ. Երկու մղոն Ճամբան շուտով կ'ընենք, սիրելի  
բարեկամ, չեմ մի ըսեք ինձ:

ՊՕՆՓԻԼ. Ես չեմ կրնար գոնէ ըոսկէ մը կենալ:

ՊՕՆՓԻԼ. Գացէք ուրեմն:

ԱՐԴՈՒՐ. Ճեսս գալու խօսք տուիք ինձ:

ՊՕՆՓԻԼ. Բայց տսանկ շուտ երթալու խօսք չտուի:

ԱՐԴՈՒՐ. Ի՞նչ հարկաւոր գործ ունիք, որ չէք ուզեր առանկ շուտով երթալու:

ՊՕՆՖԻԼ. Թողը տուէք որ հաղուստս փոխեմ:

ԱՐԴՈՒՐ. (Եթէ անդամ մ'ալ Բամէլան տեսնէ՝ պիտի շկըր նայ անորմէ բաժնուելու): Մայլորտ, հաւատացէք ինձ, ան վայելուչ չէ քաղաքի հաղուստներով դեղը երթալը, մանաւանդ երբ տիկնոց մը պիտի ներկայանաք:

ՊՕՆՖԻԼ. Այս, այդ այդպէս է, չեմ ուրանար, բայց ես... (առանց անդամ մ'ալ Բամէլան տեսնելու չեմ լըբանար մեկնիլ):

ԻՍԱՀԱԿ. (Էլ մոնէ). Տէր իմ, սեղանը պատրաստ է:

ԱՐԴՈՒՐ. Գնա, զնա, Մայլորալը հետս պիտի դայ Ճաշելու:

ԻՍԱՀԱԿ. (Եկատոնէ). Երանի թէ երթայ ու չվերագառնայ մինչև որ չվորնտէ այն սատանան, որ այսպէս զինքը կը յիմարացընէ: (Էլ մոնէ):

ԱՐԴՈՒՐ. Մայլորտ, կառքս մեղ կ'ըսպանէ:

ՊՕՆՖԻԼ. Բարեկամ, կ'աղաչեմ, թողուցէք որ վայրկեան մը մտածեմ:

ԱՐԴՈՒՐ. Խիստ բարի. մտածեցէք ու որոշեցէք ուզած նուդ պէս:

ՊՕՆՖԻԼ. (Ժամանակ մը էլ մոտքէ ու երես էլ էնուէ): Եվլու:

ԱՐԴՈՒՐ. (Մայլորալը մեծ շփոթութեան մէջ կը զանուի):

ՊՕՆՖԻԼ. (Կը իսնէլ առելի բայց յայնուն) Եվլու:

### ՏԵՍԱՐԱՆ Ը.

#### ՏԻԿԻՆ ԵՎՐԻ ՈՒ ՆԱՅՆԵԲԸ

ԵՎՐԻ. Ի՞նչ կը հրամայէք, տէր իմ:

ՊՕՆՖԻԼ. (Կը ժաշէ մէկ էսպան ու ու էլ ըստ): Մարիկ ըրէ.

Ես կերթամ ու երեք օրէն պիտի վերագառնամ. Բամէլան քեզ կը յանձնեմ:

ԵՎՐԻ. Իր հօրը քովս երթալու չէ :  
 ՊՕՆԳԻԼ. Ո՛չ, երթալու չէ մինչեւ որ ես չվերադառնամ :  
 ԵՎՐԻ. Բայց բամէ լան վաղը անպատճառ երթալ կ'ուղէ :  
 ՊՕՆԳԻԼ. Վերդնում որ եթէ բամէ լան թողուս երթայ,  
 կեանքդ պիտի հատուցանես :

ԵՎՐԻ. Ուրեմն . . .

ՊՕՆԳԻԼ. Ըստածո իմացա՞ր :

ԵՎՐԻ. Բամէ լային կ'ըսեմ . . .

ՊՕՆԳԻԼ. (Բարեկամութեամբ). Ըստածո գնա ըրէ :  
 ԵՎՐԻ. (Թէուով). Ո՛չ, այս ինչ սատանայ մարդ եղերէ :  
 (Այ Թէնի ու իրին անշահ կանչաւելով իւ դաստիայ) :  
 ԱՐԴՈՒՐ. Մայլըրտ, շատ սրդուղած կ'երեկք :

ՊՕՆԳԻԼ. Երթանք :

ԱՐԴՈՒՐ. Որոշեցիք ուրեմն հետս դալու :

ՊՕՆԳԻԼ. Այս :

ԱՐԴՈՒՐ. Շատ կը պարտաւորէք զիս : (Թէուով) . Կը յուս  
 ամբ որ տունէն դուրս ելլելուն պէս զդաստանալու է :

ՊՕՆԳԻԼ. (Այ էանձ). Եվըէ :

ԵՎՐԻ. (Դաստալ կենալով). Ի՞նչ կը հրամայէք, տէք իմ,  
 աշաւասիլ եմ :

ՊՕՆԳԻԼ. Ալայ քեզի թէ որ բամէ լան երթայ : (Իւ Թէնի) :

ԵՎՐԻ. Եկու, բամէ լա, եկու, Մայլըրտը գնաց + շիտակը  
 ըսեմ, խելադարներէն զզուեցայ :

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԲԱՄԵԼԱ ՈՒ ԵՎՐԻ

ԲԱՄԵԼԱ. Մայլըրտը գնաց :

ԵՎՐԻ. Այս, գնաց :

ԲԱՄԵԼԱ. Ուր գնաց, կ'աղաւեմ, տիկին Եվըէ, ըսէ ինձ :

ԵՎՐԻ. Չեմ դիտեք ուր գնաց, միայն թէ երեք օքէն  
 պիտի վերադառնայ :

ԲԱՄԵԼԱ : (իւ համապատճեն) . Ո՞՛չ , ուրեմն մէկ մ'ալ տեսնելու  
չեմ դան :

ԵՎՐԵ . Ո՞՛չ , պիտի տեսնես , պիտի տեսնես , մի՛ տրտովր :  
ԲԱՄԵԼԱ . Ե՞րբ պիտի տեսնեմ . ես վաղը պիտի երթամ :  
ԵՎՐԵ . Վաղը չպիտի երթաս :

ԲԱՄԵԼԱ . Մայլորտը այսպէս հրամայեց :

ԵՎՐԵ . Այո՛ , Մայլորտը պատուիրեց որ մինչև իր վերա-  
դառնալը չմեկնիս :

ԲԱՄԵԼԱ . Ի՞նչ , մինչև անոր վերադառնալը պիտի սպասեմ :

ԵՎՐԵ . Այո , ի՞նչ կ'ըսես , ի՞նչպէս փոփոխամիտ է Մայ-  
լորտը :

ԲԱՄԵԼԱ . Ինքը աէր է , կրնայ հրաման ընել :

ԵՎՐԵ . Հոս կը մնամ շնորհակալութեամբ :

ԲԱՄԵԼԱ . Անոր կամքին հնազանդ եմ :

ԵՎՐԵ . Բամէլա , Բամէլա , կը կասկածիմ որ մայլորտը  
ոիրտդ զրաւած է :

ԲԱՄԵԼԱ . Մի այդպիսի խօսքեր ըսեր ինձի , եթէ ոչ հիմա  
պիտի լամ :

### ՏԵՍԱԲԱՆ Ժ.

ԿՈՅՆՔ ԵՒ ՏՍԱՀԱԿ .

ՏՍԱՀԱԿ . Տիկին Եվլոէ :

ԵՎՐԵ . Ի՞նչ է :

ՏՍԱՀԱԿ . Տիկին Տառւրէ Մայլորտին քոյրը եկաւ :

ԵՎՐԵ . Մայլորտը գնաց :

ՏՍԱՀԱԿ . Այո՛ , զնաց . չորս ձիերէ լծուած կառքով մը .  
կարծեմ թէ մինչև հիմա գիւղը հասան :

ԵՎՐԵ . Ըսէ Տիկնոջ թէ իր եղբայրը հոս չէ :

ՏՍԱՀԱԿ . Խօսեցայ , սակայն ինքը կառքէն իջաւ ու ահա  
կու գայ :

ԵՎՐԵ . Մինա՞լ է :

ԻՍԱՀԱԿ. Իր ասպետ ազգականին հետն է ։  
ԲԱՄԵԼԱ. Երթամ սենեակս դոցուիմ։  
ԵՎՐԻ. Ինչք՞ն կը վախնաս։  
ԲԱՄԵԼԱ. Տիկինը ինծի համար գէշ նկարագրութիւն ըւ-  
րած է իր ազգականին։  
ԻՍԱՀԱԿ. Ահա Տիկինը կու դայ. (Այ Քահեւէ)։  
ԲԱՄԵԼԱ. Ես ալ երթամ. (Ք'Ելլէ որ Երնայ)։

### ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

#### ՄԱՅԼԻՏԻ ՏԱՌԻՒԲ ԵՒ ՆՈՅՆՔ.

ՏԱՌԻՒԲ. Բամելա, ուր կ'երթաս։  
ԲԱՄԵԼԱ. Կը դաստիայ խոնաբնութեան ճը կ'ընէ անոր։  
ԵՎՐԻ. Տիկին, եղբայրնիդ հոս չէ, քիչ ժամանակ է որ  
դնաց։  
ՏԱՌԻՒԲ. Գիտեմ, ես անոր տեղը հոս ալիտի մնամ Ճաշելու  
ասպետ ազգականիս հետ։  
ԵՎՐԻ. Բայց քանի որ եղբայրնիդ հոս չէ . . . . .  
ՏԱՌԻՒԲ. Եղբօրս հոս չըլլալուն կը համարձակիս զիս վե-  
ռընտել։  
ԵՎՐԻ. Ներեցէք ինծի, ինչպէս կ'ուղէք՝ այնպէս ըրէք.  
Բայց ասպետը . . . . .  
ՏԱՌԻՒԲ. Ասպետը ձեզի ծանրութիւն չտար։  
ԵՎՐԻ. Հրաման տուէք ուրեմն որ երթամ պատրաստու-  
թիւն տեսնել տամ։  
ՏԱՌԻՒԲ. Այս, դնա՛։  
ԵՎՐԻ. (Քէսասէ). Աս վորձանքը պակաս էր։ (Այ Քէնէ)։  
ՏԱՌԻՒԲ. (Քէսասէ). Մի՛ վախնար, հոս Ճաշելու չեկայ։  
ԲԱՄԵԼԱ. (Քէսասէ). Արդեօք ես ալ երթամ ասկէ։  
ՏԱՌԻՒԲ. Բամելա, վերջապէս որոշեցի՞ր հետս դալու։  
ԲԱՄԵԼԱ. Ես Մայլորտին հրամանին հնազանդ եմ։  
ՏԱՌԻՒԲ. Մայլորտը խելագար մ'է։

ՔԱՄՔԵԼԱ. “ԵԵՐԵԳԵՔ, ԹԻԼԻՆ, ՔՈՋՐ ՄԸ ԵՐ ԵՂԹԹՐԸ ՀԱՄԱՐ  
ԱՊՍՎԵՔ ՀԽԹՍԻՐ” :

ՏԱՄԻՒՐԵ. ԹՉՈՒԱՊԱԼԱՆ, ԻՆՃ ԽՈՍԲՇԼ ԱՎԻԹԻ ԱՈՐՎԵցընես :

ՔԱՄՔԵԼԱ. “ԵԵՐԵԳԵՔ, ԹԻԼԻՆ” :

ՏԱՄԻՒՐԵ. Հոգ չէ, պատրաստուե՛ հէտս դալու :

ՔԱՄՔԵԼԱ. Շատ շնորհակալութեամբ կու դամ ձեր հետը,  
ԵՐԲ ՄԱՅԼՈՐԹԸ ՀՐԱՄԱՆ ընէ ինճ :

ՏԱՄԻՒՐԵ. Եղբայրս խոստացաւ ինճ որ զքեղ հէտս տանիմ :

ՔԱՄՔԵԼԱ. Ձեր եղբայրը ՀՐԱՄԱՆ ըրաւ ինճ որ հետերնիդ  
Հղամ:

ՏԱՄԻՒՐԵ. Տակաւին անկարդութիւններդ պիտի շարունակե՞ս :

ՔԱՄՔԵԼԱ. Պարտաւոր եմ զոց աչքերով ալ անոր ՀՐԱՄԱՆԻՆ  
Հնաղանդիլ :

ՏԱՄԻՒՐԵ. Ո՛չ, կը տեսնեմ, կը տեսնեմ, անոր Հնաղան-  
դելու պատրաստ ես :

ՔԱՄՔԵԼԱ. Պարտաւորութիւնս կը կատարեմ, տիկին :

ՏԱՄԻՒՐԵ. Քու պարտաւորութիւնդ պարկեշտութեամբ ու հա-  
մստութեամբ ապրիլ է :

ՔԱՄՔԵԼԱ. Ես ալ անով կը պարծենամ :

ՏԱՄԻՒՐԵ. Անանկ չէ, դուն անպարկեշտ աղջիկ մ՞ես :

ՔԱՄՔԵԼԱ. Ի՞նչպէս կրնաք այդ խօսքը ինճ ըսել :

ՏԱՄԻՒՐԵ. Տիրոջդ քովը մնալ կ'ուզես, այնպէս չէ, վասն  
զի անոր սիրահարեալ ես :

ՔԱՄՔԵԼԱ. Տիկին, դուք արդարութեան դէմ կը դատէք :

ՏԱՄԻՒՐԵ. Անմեղ ես :

ՔԱՄՔԵԼԱ. Այս, անմեղ եմ Աստուծոյ շնորհօքը :

ՏԱՄԻՒՐԵ. Աւրեմն հետս եկաւ :

ՔԱՄՔԵԼԱ. Ձեմ կրնաք դալ :

ՏԱՄԻՒՐԵ. Ինչո՞ւ համար :

ՔԱՄՔԵԼԱ. Վասն զի ՄԱՅԼՈՐԹԸ արգիլեց :

ՏԱՄԻՒՐԵ. Ադ հոգը իմ վրաս թող, եկաւ հետս :

ԲԱՐԵԼԱ. Ասանկ անվայելուչ բան մը ընելու մի ըստիպէք դիս :

ՏԱՄԻՐԻ. Կը յանդղնիս այսպէս խօսելու :

ԲԱՄԻԼԱ. Ներեցէք ինձ արևնուդ համար, կ'աղաչեմ:

### ՏԵՍԱԲԱՆ ԺԲ.

ԱՍՊԵՏ ԷՐՆՈԼՏ ԵՒ ՆՈՅՆՔ.

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ կ'ընէք հոս, Ապյէտի, այս գեղեցիկ աղջկան հետ :

ՏԱՄԻՐԻ. Կը հաւնիք դան :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ ըսել է. Օրիորդը Բամելան է, որու համար երեք ժամ առաջ ինծի խօսեցաք :

ՏԱՄԻՐԻ. Այս, նոյն ինքն է :

ԷՐՆՈԼՏ. Չեր նկարագրածէն ալ աւելի գեղեցիկ է, իբրիու աչքերը մարդուս սիրտը կը բոցավառեն :

ԲԱՄԻԼԱ. Տիկին ձեր հրամանաւը. (Երթաւ Վաղեպէ) :

ՏԱՄԻՐԻ. Ո՞ւր կ'երթաս. (Բամելանայ) :

ԷՐՆՈԼՏ. (Բամելանայ). Ոչ, ոչ, իմ հօդիս, մի երթար ութող որ քիչ մը ժամանակ քու չնաշխարհիկ գեղեցկութիւնդ վայելեն իմ աչքերս :

ԲԱՄԻԼԱ. Ո՛վ ասպետ, այդպիսի խօսքերը ինծի համար չեն :

ՏԱՄԻՐԻ. Ասպետ, թողուցէք, ան պահուած որս մ'է Ապյուս եղբօրս համար :

ԷՐՆՈԼՏ. Հնարը չկամ արդեօք փոքրիկ շնորհք մը իսկ դրելու անորմէ :

ԲԱՄԻԼԱ. (Թէսուէ). Այս ինչ անպարկեշտ խօսքեր են :

ՏԱՄԻՐԻ. Ասպետ, թողուցէք դան, դիս իսկս բարկացուց :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ ըրաւ ձեզ :

ՏԱՄԻՐԻ. Եղբայրս խոստացաւ ինձ որ Բամելան իմ ծառայութեանս դայ, ու ան հիմա չուզեր հետս դալ. այսպէս եղբօրս իր խօսքին վրայ հաստատ չմնալուն պատճառ կ'ըլլայ :

ԷՐՆՈԼԸ . Աղջիկս , պէտք է որ Մայլորախն խօսքը կատարուի , ու հարկաւ պէտք է որ դուն տիկնոջ քով ծառացյութեան դաս :

ԲԱՄՔԻԱ. Բայց ես անկախ չեմ :

ԷՐՆՈԼԸ . Իրաւունք չունիս դէմ կենալու , պէտք է որ դաստիկնոջ ծառայելու :

ԲԱՄՔԻԱ. Բայց եթէ Մայլորաը . . . . :

ԷՐՆՈԼԸ . Մայլորաը Մայլէտիին եղբայրն է , անոնք իրենց մէջ կը յարմարին ու զործը կարդի կը դրուի :

ԲԱՄՔԻԱ. Ասպետ . . . . :

ԷՐՆՈԼԸ . Փութա , փութա , շատախօսութիւն մի՛ ըներ , ձեռքդ տուր ինձի իրթանք :

ԲԱՄՔԻԱ. Չեմ կրնար համբերել այսպիսի բռնութեան մը :

(Դէռ ՚է դուռը կ'երլույ ֆախլէլու) :

ԷՐՆՈԼԸ . (Դրան առջևը կը կենաց) . Շշմարիտ կ'ըսեմ , ասկէ դուրս չես կրնար ելլել :

ԲԱՄՔԻԱ. Ի՞նչ է այս , ասպետ , Մայլորա Պօնֆիլին տանը մէջ այսպէս ընէք :

ՏՐՈՒԹԵ. Ո՞վ ես դուն որ Մայլորախն իրաւունքները կ'ուղիս պաշտպանել . միթէ անո՞ր կը վերաբերիս . երկնից վրայ կ'երդնում որ եթէ կարենայի իմանալ թէ՝ տէրդ քեզի հետ ամուսնացեր է կամ թէ ամուսնանալու է , դաշոյնը սիրտդպիտի միսէի :

ԷՐՆՈԼԸ . Մայլէտի , խորհեցէք անդամ մը , Մայլորաը այնքան խելազար է , որ եթէ Բամէլան ամուսնանայ , փոքր դքօսանքի մը համար իւր տունը պիտի պահէ :

ԲԱՄՔԻԱ. Կը զարմանամ ձեր վրայ . ես ողջախոչ աղջիկ մ'եմ :

ԷՐՆՈԼԸ . Ո՛չ , ո՛չ , կեցցես ողջախոչ տիկին , եթէ այսքան սղջախոչութիւն ունիս , անշուշտ ծախու ալ պիտի ունենաս :

ԲԱՄՔԻԱ. Ի՞նչ ըսել կ'ուղէք :

ԷՐՆՈԼԸ . Ինձի ալ կը ծախու՞ :

ԲԱՄԵԼԱ. Այո, իրաւունք ունիք, քանզի շատ պէտք ունիք ողջախոհութեամբ ծախու առնելու:

ՏԱՐԻՔ. Ասանկ լրբարա՞ր կը պատասխանես ասպետ ազգականիս:

ԲԱՄԵԼԱ. Թողլ ինձի հետ արժան եղած կերպով վարուին ես ալ այն ատենը խոնարհութեամբ կը խօսիմ անոր հետ:

ԵՐՆՈՒՏ. Ես չեմ գծուարիք գեղեցիկ զոլունկներէ արտասանուած նախատանաց վրայ միշտ այսպիսի գեղեցիկները բարկասիրտ կ'ըլլան: Գիտէք, դուք հոս ըլլալնուդ ձեզմէ կ'ամշնայ գուրս ելէք անդամ մը, նայեցէք ինչպէս կամքս կը կատարէ:

ՏԱՐԻՔ. Կ'ուզեմ որ դայ իմ տունս բնակի:

ԵՐՆՈՒՏ. Կու զայ, կու զայ, կ'ուզէք ձեզի ցուցընեմ թէ ինչպէս միտքը կ'ընեմ ձեր հետը դալու, տեսէք. (Ճոշին գոտի նը կը հանէ). Բամէլա, ասոնք սսկի են, թէ որ Մայլէտիին հետը երթաս, իբր ասպետ խօսք կու տամ որ վեց տոկի կու տամ քեզ:

ԲԱՄԵԼԱ. Որոնց որ սովորած էք տալ՝ անոնց առաջք ասկի իները:

ԵՐՆՈՒՏ. Ո՛չ, ուրեմն գուն կոմսուհի մ'ես, որ վեց ոսկի շես ընդունիր, քիչ կ'երեկին քեզ:

ԲԱՄԵԼԱ. Ո՛վ ասպետ, ողջախոհութեան արժեքը գուք չէք ճանչնար, անոր համար այսպէս կը խօսիք:

ԵՐՆՈՒՏ. Ա՛ռ ամենը, կ'ուզե՞ս՝ քսակովը առ:

ԲԱՄԵԼԱ. Ո՛վ երկինք, ազատէ զիս ասկէ:

ԵՐՆՈՒՏ. Ա՛չ, շատ խենդ պիտի ըլլայի, թէ որ քսակը քեզի տայի, ո՛վ յիմար:

ԲԱՄԵԼԱ. Բոլոր այս խօսեցածնիդ Մայլորտը պիտի իմանայ:

ԵՐՆՈՒՏ. Հաւաստի եմ որ Մայլորտը մեծ հոգ կը տանի քու վրադ:

ԲԱՄԵԼԱ. Թողլուցէք զիս որ երթամ:

ԵՐՆՈՒՏ. Եկու ուրեմն հաշտուինք քեզի հետ, եկու խա-

զաղութիւն ընենք : (Կ'սակէ յետը բոնէլ) :

ԲԱՄԵԼԱ. Աերջ ըրէք, ասոնք չեն վայելեր ձեզ : (Փականէլ կ'սակէ) :

ԷՐՆՈԼՏ. Մտիկ ըրէ ինծի, խօսք մը պիտի խօսիմ :

ԲԱՄԵԼԱ. (Կը հանէլ) . Տեկին Եվրէ :

ԷՐՆՈԼՏ. Մտիկ ըրէ ինծի կ'ըսեմ :

ԲԱՄԵԼԱ. Խսահակ :

ԷՐՆՈԼՏ. Դուն լիրք աղջիկ մ'ես :

ԲԱՄԵԼԱ. Դուք լիրք ասպետ մ'էք :

ԷՐՆՈԼՏ. Ո՛չ, անարժան, ինծի լիրք կ'ըսես :

ՏԱՅԻՐԵ. Ո՛չ, թշուառական աղջիկ, իմ աղդականիս, ասպետին լիրք կ'ըսես :

ԲԱՄԵԼԱ. Թէ որ ձեր աղդականը ասպետ է, թուղ գիտնաց իր ասափառանին արժանաւութիւնը :

ՏԱՅԻՐԵ. Հիմա քեզի ապտակ մը կ'իջեցընեմ:

ԷՐՆՈԼՏ. Զեռքերէդ կը բռնեմ ու չես կրնար փախչել : (Կ'երեայ բոնէլու) :

ԲԱՄԵԼԱ. Օդնեցէք ինծի, օդնեցէք, հասէք :

### ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

#### ՏԻԿԻՆ ԵՎՐԵ; ՈՒ ՆՈՅՆԵՐԸ

ԵՎՐԵ. Վայ ինծի, ի՞նչ է աս . ի՞նչ կ'ընէք բամէլային որ այսպէս կը կանչուըսէ :

ԲԱՄԵԼԱ. Ո՛չ, տիկին, օդնէ ինծի և պաշտպանէ զիս ուրիկայի մը նախատինքներէն :

ԵՎՐԵ. Ի՞նչ կը նշանակէ այս, պարոն ասպետ, Մայլորտ Պօնֆիլին տանը մէջ :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ կը կարծես որ ես անոր ըրած ըլլամ:

ԵՎՐԵ. Անոր աղղակները դրեթէ կ'ապացուցանեն ինչ նեղութեան մէջ ըլլալը :

ԷՐՆՈԼՏ. Սիրով զգուել ուղեցի զան և ոչ ուրիշ բան :

ԵՎՐԻ. Եւ ո՞չ ուրիշ քան :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ կ'ըսես յիմար չէ , որ այսպէս կը կանչ  
ուըստե :

ՏԱՅԻՐԻ. Յանդգնութեամբ ու առանց ակնածութեան կը  
խօսի աղջականիս ու ինձի հետ ալ :

ԵՎՐԻ. Շատ կը զարմանամ՝ որ այսպէս համարձակութեամբ  
կը վարուի ասպետը Մայլորաին տանը մէջ :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ զարմանալի բան , ազախնոյ մը հետ ներ  
բելի չէ արդեօք կատակ ընելը :

ԵՎՐԻ. Ո՞ւր սորվեցաք այս գեղեցիկ սովորութիւնը :

ԷՐՆՈԼՏ. Ո՞ւր , ամեն տեղ , դուն բան չես գիտեր , ես  
Ճամբորդութիւն ըրի , շատ տեղ գեղեցիկ և շնորհալի սե-  
նեկապետուհիներու հանդիպեցայ , որոնց հետ ասպետները  
կատակ կընեն ու շատ անդամ կը սիրեն զանոնք , ու կերպ  
կերպ ծիծաղելու խօսքեր կը խօսին իրարու հետ :

ԵՎՐԻ. Ճշմարիտ կ'ըսեմ , պարոն ասպետ , Ճամբորդու-  
թիւն ընելով շատ աղջոր բաներ սորվեր էք :

ՏԱՅԻՐԻ. Թողուցէք ասանկ վիճաբանութիւնները , Քամէլան  
իմ հետս դալու է :

ԲԱՄԵԼԱ. (Կամաց ճը Եվրէին) . Տիկին Եվրէ , քեզի կ'ապա-  
ւինիմ :

ԵՎՐԻ. Տիկին , սպասեցէք որ Մայլորատը վերադառնայ :

ՏԱՅԻՐԻ. Հիմա որ Մայլորատը հոս չէ , Քամէլան անջուշտ  
պարտաւոր է իմ հետս դալ :

ԵՎՐԻ. Ներեցէք , ամենեին չկրնար դալու :

ՏԱՅԻՐԻ. Զիդար կ'ըսես , քաշքանով ու բռնի կը տանիմ :

ԷՐՆՈԼՏ. (Եվրէին) . Զեղի պէս անմիտ կնիկ տեսած չեմ ես :

ԵՎՐԻ. Պարսն ասպետ , պատոյս դէմ մի՛ խօսիր , Մայ-  
լորա Պօնֆիլին վերակացուհին եմ ես :

ԷՐՆՈԼՏ. Ի՞նչ կըսես , ես կը կարծէի թէ Ճնդկաստանու  
վերակացուհին ես :

ԵՎՐԻ. Այս նախատինքները , որ դուք Մայլորա Պօնֆիլին

Աւունիք կ'ընէք, ողականի պիտի չմնան, ու Մայլորանը պիտի  
իմանայ:

ՏԵՍԻՐԻ. Թողէ իմանայ, ինքն է պատճառը:

ԿՐՆՈՒՏ. Արկու յիմար կանանց համար Մայլորանը չըար  
իմանար:

ԵՎՐԻ. Աը զարմանամ ձեր վրայ:

ՏԵՍԻՐԻ. Յանդուզն կնիլ, (Քեզ է բառաւ կ'էքնայ և իւ կանչէ):

ԵՎՐԻ. Ա՛ր էք, չոս եկէք:

ԵՎՐԻ. Ա՛վ կը կանչէք, աիկին:

ՏԵՍԻՐԻ. Իմ ծառաներս կը կանչի՞մ:

ԵՎՐԻ. Բոնութիւն պիտի բանեցը նէք:

ՏԵՍԻՐԻ. (Աշբարին բառաւ իւ բանայ և իւ կանչէ): Եկէք շնորհի՞մ:

### ՏԵՍԱԲԱՆ ԺԴ.

ԿՐՑԱԳ ԵՒ ԽԱՎԱՐԱԿ.

ԽԱՎԱՐԱԿ. Ի՞նչ կը չըամայէք, աիկին:

ՏԵՍԻՐԻ. Ա՛ր են իմ ծառաներս:

ԽԱՎԱՐԱԿ. Ամենքն ալ վար իջան, մասն զի Մայլորանը ետ  
դարձաւ:

ԵՎՐԻ. Մայլորանը:

ԽԱՎԱՐԱԿ. Այս, Մայլորանը ետ գարձաւ:

ԲԱՄԻԼԱ. (Քիւսակ). Ա՛չ, օրհնեալ է Աստուած:

ԵՎՐԻ. Գիտես ի՞նչ է պատճառը:

ԽԱՎԱՐԱԿ. Ճամբան սիրտը մարեր է: (Աը Քիւսակ):

